C#sharp (beginer + basics)

www.albdarb.com
Ալբերտ Ս. Դարբինյան
Կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ ,Պոլիտեխնիկ
Microsoft IT Academy
Ինֆորմատիկա և Հաշվողական Տեխնիկա, ԳՊՀ

Հարցաշար

Ալգորիթմական C#sharp (Algorithmic C#)
1. Ծրագրի հրամանների կատարման հաջորդականությունը [albdarb] (էջ 5)
2. Թարգմանիչներ: Console Application – (թվային մուտք) [albdarb] (էջ 6)
3. Ներդրված տիպեր [Шилдт-68; Нейгел-78] (էջ 6)
4. Օպերացիաներ և օպերատորներ [Шилдт-97] (էջ 8)
   Վերագրման օպերատոր [Шилдт- 106]
   Թվաբանական օպերացիաներ (+, -, *, /, %) [Шилдт- 97]
   Համեմատման օպերացիաներ (< ,>,==,!=, <=, >=) [Шилдт-101]
   Տրամաբանական օպերացիաներ (&&, ||, !) [Шилдт-101]
   Մեծացման և փոքրացման օպերացիաներ, (++, --) [Шилдт- 98]
5. Պայմանական օպերատոր if, if….else [Шилдт-121] (էջ 10)
6. Պայմանական օպերատոր (?) [Шилдт- 117] (էջ 10)
7. Ցիկլիկ օպերատորներ - while, do… while, for [Шилдт-129] (էջ 11)
8. Անցումային օպերատորներ – break, continue, goto [Шилдт-139] (էջ 13)
9. switch օպերատոր [Шилдт-125] (էջ 14)
10. Բիթային օպերացիաներ (|, &, ~, ^, <<, >>) [Шилдт-107] (էջ 16)
11. Տիպերի վերափոխարկման օպերատոր ( ) [Шилдт-89] (էջ 17)
12. C/C# պարզ տարբերություններ [Шилдт-97, 121] (էջ 17)
13. Զանգված [Шилдт -139; Нейгел- 184] (էջ 18)
   Պրակտիկ խնդիրներ մատրիցաներից [albdarb]

Ֆունկցիոնալ ծրագրավորում (Functional programming)
14. Ծրագրավորման լեզուների զարգացման էտապները [albdarb] (էջ 23)
15. Մեթոդներ [Шилдт-155] (էջ 24)
   մեթոդի պարամետրեր, արգումենտներ [Шилдт-162]
   մեթոդի վերադարձվող արժեք, return օպերատոր [Шилдт-158]
16. Գերբեռնված մեթոդներ [Шилдт-235] (էջ 27)
17. Ռեկուրսիա [Шилдт-257] (էջ 28)
18. Լոկալ փոփոխականներ, բլոկ { } [albdarb] (էջ 30)
19. Մեթոդ և ստեկ հիշողություն [albdarb] (էջ 31)
   Տնային ալգորիթմական շախմատից [albdarb]

C#sharp հիմունքներ (C # Basics)
20. Կլասներ, օբյեկտներ [Шилдт-147; Троелсен-185] (էջ 32)
21. Թույլատրության մոդիֆիկատորներ [Троелсен-207; Шилдт-210] (էջ 33)
22. Կոնստուկտոր, լռելիությամբ կոնստրուկտոր [Шилдт-166; Троелсен-188] (էջ 34)
23. Պարամետրով և գերբեռնված կոնստրուկտորներ [Шилдт-168] (էջ 34)

24. Ինիցալիզատոր, կոմպոզիցիա, ագրեգացիա [albdarb] (էջ 35)
25. Անունների տարածք, Պսեվդոանուն [Шилдт-513; Троелсен-494,497; Нейгел-92,94] (էջ 36)
26. Անունի տարածք և global:: [Шилдт-524; Уотсон-369] (էջ 37)
27. Չափային և հղիչային տիպեր [Нейгел-371; Рихтер-129; Троелсен-174] (էջ 38)
28. boxing, unboxing [Рихтер-136; Шилдт-370; Нейгел-217] (էջ 39)
29. null, ?, ?? [Шилдт-695; Нейгел-211] (էջ 40)
30. Ստրուկտուրաների կազմակերպումը [Нейгел-130; Шилдт-391; Троелсен-172] (էջ 41)
Օրինակ. Լոկալ տվյալների կուտակիչ [albdarb]
31. new չափային տիպերի համար, default [Троелсен-120; Шилдт -170] (էջ 45)
32. Կոպիայի կոնստրուկտոր [Либерти-97] (էջ 45)
33. Կլասի ստատիկ անդամներ [Троелсен-197; Шилдт-260] (էջ 46)
34. Ստատիկ կոնստրուկտոր, Ստատիկ կլաս [Троелсен-201; Нейгел-126; Шилдт-265; Рихтер-172] (էջ 47)
35. Փակ կոնստրուկտոր, Սինգլտոն փաթերն [Либерти-101] [Нэш-96] (էջ 48)
36. this հղում [Троелсен-191; Шилдт -174] (էջ 50)
37. this որպես մեթոդի արգումենտ [Либерти-98] (էջ 51)
38. Կոնստրուկտոր և this [Троелсен-193; Нейгел-128; Шилдт-245] (էջ 51)
39. const հաստատուն, readonly հաստատուն [Рихтер-191; Троелсен-226; Нейгел-129; Нэш-63] (էջ 52)
40. enum հաստատուն (թվարկում) [Троелсен-167; Нейгел-90; Шилдт -397] (էջ 53)
41. System.Enum [Троелсен-169] (էջ 53)
42. foreach ցիկլ [Троелсен-145; Нейгел-197] (էջ 54)
43. Անհամաչափ զանգված [Троелсен-163; Нейгел-188] (էջ 55)
44. System.Array [Троелсен-165; Либерти-192] (էջ 56)
45. System.String [Нейгел-266; Троелсен-127; Либерти-252] (էջ 57)
46. System.Text.StringBuilder [Троелсен-133; Petzold-546] (էջ 59)
47. String.Format [Шилдт – 812; Нейгел-215; Covaci – 150] (էջ 60)
48. Հատկանիշ [Шилдт-313; Троелсен-212; Рихтер-248] (էջ 61)
49. Ավտոմատ հատկանիշներ [Троелсен-219; Нэш -69; Шилдт-318; Нейгел-124; Скит-224] (էջ 62)
50. Օպերատորների գերբեռնում [Троелсен-426; Нейгел-219; Шилдт-269] (էջ 63)
51. Ինդեքսատոր [Троелсен-421; Шилдт-303] (էջ 66)
52. Առանց կուտակիչի ինդեքսատոր [Шилдт-310] (էջ 67)
53. Գերբեռնված ինդեքսատոր [Шилдт-307; Либерти-216] (էջ 67)
54. Main() մեթոդ [Троелсен-108; Шилдт-254; Нейгел-95] (էջ 68)
55. Մեթոդի անվանական արգումենտներ [Шилдт-252; Нейгел-121; Уотсон-411] (էջ 69)
56. Մեթոդի ոչ պարտադիր պարամետրեր [Шилдт-247; Нейгел-121; Уотсон-411] (էջ 69)
57. Մեթոդի հղող պարամետրեր - ref, out [Троелсен-150; Шилдт-222] (էջ 70)
58. ref, out հղիչային տիպերի համար [Шилдт-227] (էջ 72)
59. Մեթոդի պարամետր – params [Троелсен-154; Шилдт-229] (էջ 73)
60. partial կլասներ, partial մեթոդներ [Нэш-91; Нейгел-133; Троелсен-448] (էջ 75)
61. var - ոչ հստակ տիպայնացում [Троелсен – 140; Скит -226; Нейгел-72; Уотсон-400] (էջ 76)
62. Անանուն տիպեր [Уотсон-402; Нейгел-130; Скит Джон-239; Шилдт-663] (էջ 77)
63. Ընդլայնված մեթոդներ [Троелсен-440; Нэш-477; Уотсон-417] (էջ 78)
64. Կանոնավոր արտահայտություններ [Албахари –981; Нейгел-277] (էջ 80)

Օբյեկտ կողմնորոշվածություն (Object oriented)
65. Ժառանգում, protected [Троелсен-231,240; Шилдт-329,336] (էջ 83)
66. Ժառանգում և new, base [Шилдт-343; Нейгел-144] (էջ 84)
67. Բազային կոնստրուկտորի կանչ : base [Троелсен-238; Шилдт-339; Нейгел-149] (էջ 84)
68. Ներդրված տիպերի վերափոխարկում [Троелсен-135; Нейгел-228] (էջ 86)
69. Կոնվերտացիաներ [Covaci – 122; Kort-185] (էջ 87)
70. Ժառանգական կապվածությամբ տիպերի վերափոխարկում [Троелсен-434,403; Нейгел-233] (էջ 88)
71. Հղում բազային կլասով [Шилдт-351] (էջ 88)
72. Վիրտուալ մեթոդներ, virtual, override, Պոլիմորֆիզմ [Шилдт-355,43; Троелсен-245] (էջ 89)
73. Տիպերի վերափոխարկում implicit, explicit [Троелсен-435,403; Нейгел-230] (էջ 90)

74. Մեկուսացված մեթոդներ և կլասներ [Троелсен-248, 234; Шилдт-367] (էջ 91)
75. Աբստրակտ կլասներ [Троелсен-249; Шилдт-363] (էջ 92)
76. Ներդրված կլասներ [Троелсен-243; Либерти-141] (էջ 93)

Օբյեկտ (Object)
77. Object կլաս և նրա անդամները [Троелсен-258; Нэш-114; Шилдт-368; Нейгел-135] (էջ 94)
78. Object կլասի ToString() անդամի վերավորոշումը [Троелсен-261; Нейгел-137] (էջ 95)
79. Object կլասի Equals() անդամի վերաորոշումը [Троелсен-261; Нэш-445; Рихтер-155] (էջ 95)
80. System.Object.GetHashCode() մեթոդի վերաորոշումը [Троелсен - 262, 258; Нэш-448] (էջ 96)
81. Object կլասի static անդամները [Троелсен-264; Нейгел-218] (էջ 97)
82. Object. MemberwiseClone [albdarb; Нэш-427] (էջ 98)
83. object - որպես տիպերի ընդանրություն [Shiltd-372] (էջ 99)
84. Դինամիկ տիպեր - dynamic [Троелсен-648; Нэш-557; Шилдт-703] (էջ 100)

Ինտերֆեյս (Interface)
85. Ինտերֆեյս [Либерти-162; Шилдт-375; Троелсен-320] (էջ 102)
86. Ինտերֆեյսի հղում [Шилдт -381; Либерти-171] (էջ 103)
87. Ինտերֆեյսի is և as պատկանելիության ձևեր [Либерти-173; Троелсен-329] (էջ 104)
88. Ինտերֆեյսը մեթոդի պարամետր և վերադարձվող արժեք [Троелсен-330] (էջ 106)
89. Ինտերֆեյսների ժառանգականություն, բազմաժառանգում [Шилдт -387; Троелсен -337, 304] (էջ 107)
90. Ինտերֆեյսների բացահայտ իրականացում [Троелсен -334,301; Шилдт-388] (էջ 108)
91. Ինտերֆեյս ICloneable [Троелсен-346; Шилдт-779] (էջ 109)
92. Ինտերֆեյս IEnumerable, IEnumerator [Троелсен-340; Шилдт - 1001] (էջ 111)
93. foreach և IEnumerable [Нейгел-197; Уотсон-295] (էջ 113)
94. Իտերատորներ, օպերատոր yield [Троелсен-343; Нейгел-197; Уотсон-295; Шилдт-1003] (էջ 113)
95. Անվանական իտերատորներ [Троелсен-344; Нейгел-199] (էջ 114)
96. Ինտերֆեյս ICamparable [Троелсен-350; Шилдт-778] (էջ 116)

Դելեգատ (Delegate), **Իրադարձություն** (Event)
97. Դելեգատներ [Шилдт-473; Троелсен-386; Нейгел-241] (էջ 118)
98. Խմբային դելեգատներ [Шилдт-476; Троелсен-396; Нейгел-251; Либерти-316] (էջ 119)
99. Delegate և MulticastDelegate բազային կլասներ [Троелсен-389; Нэш - 288] (էջ 120)
100. Անանուն մեթոդներ [Нейгел-254; Нэш-314; Троелсен-411; Шилдт-484] (էջ 122)
101. Lambda արտահայտություն [Шилдт-488; Нэш-503; Нейгел-255; Троелсен-413; Скит -246] (էջ 123)
102. Covariance և Contravariance դելեգատներ [Шилдт-481; Троелсен-400] (էջ 125)
103. Իրադարձություն [Троелсен-404; Шилдт-494] (էջ 127)
104. FCL գրադարանի իրադարձություններ, EventHandler դելեգատ [Шилдт-506,508; Либерти-321] (էջ 128)

Բացառություն (Exception)
105. Բացառիկ իրավիճակներ [Троелсен-265; Нейгел-419; Шилдт-403] (էջ 130)
106. Արհեստական բացառիկ իրավիճակ [Шилдт-414] (էջ 131)
107. Կրկնակի արտակարգ իրավիճակ [Шилдт-415] (էջ 132)
108. Բազմակի catch – ի օգտագործում [Троелсен-282; Нейгел-423] (էջ 133)
109. System.Exception [Шилдт-418; Троелсен-268; Нейгел-427] (էջ 134)
110. Ժառանգված բացառիկ իրավիճակ [Шилдт-422] (էջ 135)
111. checked , unchecked [Шилдт -428 ; Троелсен-139; Нейгел-209] (էջ 136)

Ընդհանրացում (Generics)
112. Ընդհանրացումներ [Нэш-309; Шилдт-575; Нейгел-161; Рихтер-289; Троелсен-356] (էջ 137)
113. Կլասների ընդհանրացում և where սահմանափակում [Шилдт-585; Троелсен-383] (էջ 138)
114. Generics - մեթոդներ [Нэш-316; Шилдт-607; Троелсен-376] (էջ 141)
115. Generics - դելեգատներ[Нэш-318; Шилдт-610; Троелсен-402] (էջ 142)
116. Action<> և Func<> դելեգատներ [Троелсен -371; Нейгел- 247; Covaci - 216] (էջ 143)

117.Generics – ինտեֆեյսներ [Шилдт -612; Нейгел -171] (էջ 144)
118.Ինտերֆեյսի Covariance ընդհանրացումներ [Шилдт -626; Нейгел-171; Уотсон-362] (էջ 145)
119.Ինտերֆեյսի Contravariance ընդհանրացումներ [Шилдт -630; Нейгел-174; Уотсон-364] (էջ 146)
120.Կլասի հետաձգված ինիցալիզացիա - Lazy<> [Троелсен-314; Гриффитс-873] (էջ 146)

albdarb.com
user: books psw: “sharp” psw: “sharp2” psw:”sharp3” (ռուսերեն գրականություն)
user: books psw: “sharpeng” psw: “sharpeng2” (անգլերեն գրականություն)

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Шилдт Г. -“Полное руководство C#4.0”, 2010.
2. Троелсен Э. - “C# 2010 и платформа .NET 4.0”, 5ed, 2010.
3. Нэш Трей – “C# 2010. Ускоренный курс для профессионалов”,2010.
4. Нейгел и др…. - ”C# 4 и платформа .NET 4 для профессиоралов”, 2010.
5. Рихтер Джеффри –“ CLR via C#. Программирование на платформе Microsoft .NET Framework 4.0 на языке C#” , 2010.
6. Либерти Дж. - “Программирование на C # “, 2ed, 2002eng.
7. Уотсон К., Нейгел К. – “Visual C# 2010: полный курс. ”, 2010.
8. Скит Джон– “C# программирование для профессионалов”, 2011.
9. Йен Гриффитс – “Программирование на C# 5.0”,2013.
10. Tiberiu Covaci…”MCSD Certification Toolkit (Exam 70-483): Programming in C#”, 2013.
11. Wouter de Kort - “Exam Ref 70-483: Programming in C#”, 2013.
12. Албахари Джозеф, Албахари Бен - C# 5.0. Справочник. Полное описание языка, 2012.
13. Троелсен Э. - Язык программирования C# 5 и платформа .NET 4.5, 6ed, 2012.
14. Рихтер Дж. - CLR via C#. Программирование на платформе NET Framework 4.5 на языке C#, 2012.
15. Christian Nagel … , “Professional C# 2012 and .NET 4.5”, 2012.
16. Дейтел П., Дейтел Х. – “Как программировать на Visual C# 2012”,2012.

Ալգորիթմական C#

1.Ծրագրի հրամանների կատարման հաջորդականությունը

- Համակարգիչների կառուցվածքը տվել է Ֆոն Նեյմանը դեռ 40 ական թվականներին: Նա նշել է, որ ապագա համակարգիչը պետք է ունենա ղեկավարման մաս (այժմ CPU), հիշողություն (այժմ RAM), մուտք/ելքի մաս: Բացի դրանից, այն պետք է լինի էլեկտրոնային, հաշվի երկուական համակարգով և **հրամանները կատարի հաջորդաբար**:



- Ծրագրի հրամանները կատարվում են պրոցեսորի միջոցով: Նրանք պետք է գտնվեն օպերատիվ հիշողությունում: Ծրագրի **հրամանները** և **տվյալները** ստանում են հասցեներ և սկզբից ծրագրի կատարման առաջին հրամանի հասցեն տեղադրվում է հրամանի հաշվիչում: Հաջորդ քայլում հաշվիչի պարունակության հասցեի համապատասխան հրամանը բերվում է հրամանի ռեգիստր: Սկսվում է կատարվել ռեգիստրում գտնվող հրամանը, միաժամանակ կատարվում է շատ կարևոր գործողություն, **հրամանի հաշվիչի պարունակությունը ավելանում է մեկով**, որը նշում է հաջորդ հրամանի հասցեն: Այս ձևով ապահովվում է ծրագրի ավտոմատ կատարումը: Ավելացնենք, որ համակարգիչը գլխավորապես կատարում է միայն գումարում և ցանկացած գործողության կատարումը կազմակերպվում է գումարիչի միջոցով: Օրինակ, եթե անհրաժեշտ է 22 հացեի պարունակություն 3 թիվը տանել 23 հասցե, ապա այն սկզբից բերվում է գումարիչ, հետ նոր միայն այնտեղից 23 հասցե:
- Ծրագրավորման տեսանկյունից կարելի է ասել, որ ծրագիրը բաղկացած է հրամաններից (ADD, LOAD, HALT), տվյալներից (8, 3, 7, 0, 0) և հիշողության հասցեներից (10, 11, 12, 13 …..):
- **Մինիմալ ինֆորմացիոն միավորը**, որը կարելի է գրել կամ կարդալ հիշողությունից, դա 8 բիթն է: Այդ պատճառով, եթե անհրաժեշտ է նույնիսկ գրել 1 բիթանոց տվյալ, միևնույնն է պետք է զբաղեցնել 8 բիթ տարածք:

2. Թարգմանիչներ: Console Application – (թվային մուտք)

[albdarb]

- Ցանկացած խնդիր ծրագրավորելու համար անհրաժեշտ է թարգմանիչ: Թարգմանիչը որևէ լեզվով գրած ծրագիրը թարգմանում է երկուական կոդի, որպեսզի համակարգիչը կարողանա այն կատարել: Ինչպես թարգմանիչն է հիշողության մեջ տեղ գրավում, այնպես էլ որևէ լեզվով գրած ծրագիրը և նրա թարգմանված 2- ական կոդը:
- Թարգմանիչները լինում են երկու տեսակ: Ինտերպրետատոր (նախկին Basic լեզուն, ժամանակակից "բրովզերները – Google Chrom, Microsoft intrnet Explorer ") կամ կոմպիլիատոր(C, Pascal, C++): Ինտերպրետատրի ժամանակ ծրագիրը թարգմանվում է մաս մաս ու տեղում կատարվում: Ծրագրի ամեն նոր կանչի ժամանակ կատրվում է նոր թարգմանում: Կոմպիլիատրի ժամանակ ծրագիրը թարգմանվում է ամբողջությամբ, միայն մեկ անգամ և կատարվում թարգմնված ծրագրի բազմակի օգտագործում: Ինտերպրտատորը աշխատում է դանդաղ, սակայն օգնում սխալները շուտ հայտնաբերել: Կոմպիլիատորը ավելի պրոֆեսիոնալ մոտեցում է պահանջում և նրա թարգմանած ծրագիրը աշխատում է ավելի արագ:
- C#sharp լեզուն կարելի է ասել ավելի շատ կոմպիլիտոր է քան ինտերպրետատոր: Ավելի շուտ, C# դա dotNET համկարգի լեզու է և աշխատում է նոր սկզբունքով: Այդ զկզբունքը կոչվում է ղեկավարման կոդ, որը կանցնենք ավիլի ուշ:
- Console Application -ի օրինակ. (անդուր սև սպիտակ մուտք/ելքի տեսքով)

```
using System;
class M
{
    public static void Main(string[] args)
    {
        Console.WriteLine("baerv bolorin"); // ելք
        int a = 999; // փոփոխականի հայտարարում
        int b = 222;
        int c = a + b;
        Console.WriteLine("The sum of " + a + " and " + b + " = " + c); // ելք
        Console.WriteLine("The sum of {0} and {1} = {2}", a, b, c); // ելքի այլ տարբերակ
        string aa = Console.ReadLine();// մուտք
        a = Convert.ToInt32(aa); // կոնվերտացիա սիմվոլային տողից - թիվ
        //a=Int32.Parse(aa); // կոնվերտացիայի այլ տարբերակ
        b = Convert.ToInt32(Console.ReadLine()); // մուտք
        //b=Int32.Parse( Console.ReadLine() ); // մուտք
        c = a + b;
        Console.WriteLine(c); // ելք
        Console.ReadKey();// ծրագրի ՀԱՐՄԱՐ սպասում արդյունքը դիտելու համար
    }
}
```

……

3.Ներդրված տիպեր

[Нейгел-78; Шилдт-68]

- Ծրագրավորումը, դա լուծման նպատակով խնդրի ալգորիթմային ներկայացումն է, որը կատարվում է համակարգչի միջոցով: Խնդրի լուծման համար անհրաժեշտ է տվյալների մշակում, որը իր հերթին բերում է տվյալների պահման(հիշման) անհրաժեշտության: Տվյալների պահումը և մշակումը կատարվում է տիպերի միջոցով: Ծրագրավորման լեզուները ունեն մեծ քանակով տիպեր, որոնք թույլ են տալիս տվյալները օգտագործել օպտիմալ ձևով:
- C# լեզուն խիստ տիպային լեզու է: Տիպային լեզուների առավելություններից է համարվում հիշողության օպտիմալ օգտագործումը: Մյուս առավելութուններից է կոդի սխալների շուտ

հայտնաբերումը, որը լավ կլինի կատարվի թարգմանության ժամանակ: Ժամանակակից լեզուներում երկրորդ չափանիշը ավելի առաջնային է համարվում:

- Ներկայացնենք C# լեզվի ներդրված տիպերը (built-in types):

byte	8bit	0-255
sbyte	8bit	-128 to 127
short	16bit	-32768 to 32767
ushort	16bit	0 to 65535
int	32bit	-2147483648 to 2147483647
uint	32bit	0 to 4294967295
long	64bit	.....
ulong	64bit	0 to 18446744073709551615
float	32bit	..... 10^{38}
double	64bit	..... 10^{308}
decimal	128bit	..... 10^{28} - ունի շատ մեծ ճշտություն
char	16bit	(unicode) - 2^{16} = ~65000 սիմվոլներ
bool	8bit	ընդունում է միայն (true or false) արժեքներ
string	աշխատանք տողերի հետ	
object	ընդհանուր տիպայնացում	

- // Տնային: Հարց: float: Ինչպես կարելի է 32 բիթով ստանալ 10^{38} թիվ:
- Պարզվում է, որ գոյություն ունեն նաև մեծ քանակով (տասնյակ հազարավոր) այլ տիպեր, որոնք չեն համարվում առաջին անհրաժեշտության տիպեր: Նրանք չեն ստանում կապույտ գույն և շատ ավելի դանդաղագործ են: Պարզ է, որ ներդրված տիպերը ավելի արագագործ են, ուղղակի բոլորին հնարավոր չէ ընդգրկել ներդրված մասում (աշխատում է էնեգիայի պահպանման օրենքը- մի բան պիտի զիջես, որպեսզի մի այլ բան ստանաս):
- byte, sbyte, short, ushort, int, uint, long, ulong տիպերը աշխատում են ամբողջ թվերի հետ: Կա պայմանավորվածություն: Տիպին հատկացվող բիթային տարածքի ամենաձախ բիթը համարվում է թվի նշանի բիթ և եթե այն զրո է, ապա թիվը դրական է: Եթե այն մեկ է, ապա թիվը բացասական է: sbyte, short, int, long, թույլատրում են աշխատել նաև բացասական թվերի հետ: byte, ushort, uint, ulong տիպերը աշխատում են միայն դրական թվերի հետ:
- float, double, decimal տիպերը աշխատում են կոտորակային թվերի հետ: Նրանք պարունակում են շատ մեծ թվեր: Մեծ թվերի հետ աշխատանքը կազմակերպվում է հետևյալ հնարքով, - թիվը կարելի է ներկայացնել երկու բաղկացուցիչով: Առաջինը կոչվում է "մանտիս" և պարունակում է միայն կոտորակային թիվ: Երկրորդը կոչվում է "կարգայնություն" և ներկայացվում է 10 ի աստիճաններով: Օրինակ.
  56789= 0,56789 * 10^5 :
  Թվերի այսպիսի ներկայացման դեպքում կարելի է շատ փոքր կորուստով աշխատել մեծ թվերի հետ, կատարելով մաթեմաթիկական գործողություններ:
  Վերցնենք float տիպը: Այն ունի 32 բիթ հիշողության տարածք (նույնը ունի նաև int տիպը, սակայն այն 4 միլիարդից ավել չի կարող պահել): 10^{38} աստիճան ստանալու համար 26 բիթ հատկացվում է "մանտիսին" և 6 բիթ կարգայնությանը: 6 բիթ ուղղակի, որպեսզի 38 թիվը 2 ականով հնարավոր լինի ներկայանել:
- decimal տիպը նորույթ է: Նրա բիթային տարածքը շատ մեծ է(128բիթ), սակայն բիթերի մեծ մասը հատկացվում է մանտիսին "սուպեր" ճշտություն ապահովելու համար(երևի որոշ բնագավառներում անհրաժեշտ է):
- Ըստ մեծության կոտորակային թվերը դասավորվում են decimal, float, double հերթականությամբ:

```
double doub = 1.0E308; //փորձել
float fl=1.0E38f;
decimal dec = 1.0E28m;
```

- char տիպը նախատեսվում մեկ նիշ(սիմվոլ) պահելու համար: C# ում այն ունի 16 բիթ տարածք(նախկին լեզուներում 8 բիթ էր), որը հնարավորություն է տալիս հաղթահարել լեզվային սիմվոլների սահմանափակումները: Այլ խոսքով, առանց միջնորդ ծրագրերի(KDWin - մադեվին), կարելի է աշխատել աշխարի բոլոր լեզուների հետ: Այստեղ նույնպես ունենք հիշողության կորուստ, սակայն շահում ենք ավելի "կոնֆորտ" աշխատանքում:
- bool տրամաբանական տիպ է: Այն ունի վերացականության հատկություն: Ինչպես գիտենք, համակարգիչը կառուցված է տրամաբանական էլեմենտներից: Նրանք են "և" "կամ" "ոչ": Այլ խոսքով համակարգչի ԴՆԹ –ն կազմված է 3 ելեմենտից: Նշված էլեմենտներից կազմված են սխեմաները, որոնք կատարում են տրամաբանական աշխատանքներ: Ահա այս տրամաբանական մոտեցումը կիրառվում է նաև ծրագրավորման մեջ: Ծրագրի որևէ հատված մեզ կարող է ասել ինչ որ բան ճիշտ է, թե ոչ: Ճիշտ է գաղափարը պայմանավորվենք true անվանել, ճիշտ չէ գաղափարը պայմանավորվենք false անվանել, պարզ է համապատասխան տարածք տրամադելով ծրագրի այս պահվածքին:
- string և object տիպերը կանցնենք ավելի ուշ: Նշենք, որ string տիպը աշխատում է տողերի հետ, որոնք կարելի է համարել սիմվոլների խումբ: Իսկ object տիպը ամենատարողունակ տիպն է և կարող է հանդես գալ ցանկացած տիպի փոխարեն:

……

- Տնային: Ցանկալի է տիրապետել "Ինֆորմատիկա" առարկայից 2 –ական թվերի հետ գործողությունների կատարմանը: Իմանալ 16 ական թվերի մասին: Կատարել 2 –ականից 16 ական և հակառակ գործողություններ: Տիրապետել բացասական թվերի գաղափարին:

……

4.Օպերացիաներ և օպերատորներ

[Шилдт-97]

- Պայմանավորվենք, որ համակարգչի տեսակետից **օպերացիաները** ավելի թույլ գործողություններ են կատարում, իսկ **օպերատորները** ավելի բարդ: Վեջին հաշվով նրանք նույնն են:
- Նշենք նաև, որ ցանկացած հրաման ավարտվում է կետ ստորակետով (;) :

Վերագրման օպերատոր (=) [Шилдт- 106]

c=a+b;

- Վերագրման օպերացիան դա մաթեմատիկական նույնություն չէ: Այսինքն, եթե հավասարության աջ մասը փոփոխենք, ապա ձախ մասը համապատասխանորեն կփոփոխվի: Իսկ, եթե ձախ մասն ենք փոխում աջ մասը չի փոխվում: Մաթեմատիկայում այդպես չէ: Նշված երևույթը կապված է ծրագրավորման առանձնահատկություն հետ: Այն խիստ կախված է համակարգչի ներքին կառուցվածքից, հիշողության կազմակերպումից և ռեսուրսներից:

Թվաբանական օպերացիաներ (+, –, *, /, %) [Шилдт- 97]

- Ցանկացած թվային տիպի հետ կարելի է կատարել թվաբանական գործողություններ, որոնք նման են մաթեմատիկականին:
- / - բաժանում գործողությունը ամբողջ տիպերի դեպքում (byte, short, int, long) պահում է միայն թվի ամբողջ մասը: % գործողությունը կատարում է բաժանում և պահում է մնացորդը: Նշենք որ, կոտարակային թվերի դեպքում / - բաժանում կատարվում է նորմալ և % գործողությունը նույնպես պահում է մնացորդը:

```
using System; // Գտնել եռանիշ թվի թվանշանների գումարը:
class Program
{
     static void Main(string[] args)
    {
      int a = 567;
      int a1, a2, a3;
```

```
      a1 = a / 100;
      a2 = a % 100 / 10;
      a3 = a % 10;
      Console.WriteLine(a1 + a2 + a3);
     }
}

// (տնային) ցանկացած թվի  թվանշանների  առանձնացում  և գումար:
// մի տանջվեք, չի ստացվի: Դրա համար նոր հրամաններ են պետք:
```

Համեմատման օպերացիաներ (**< ,>,==,!=, <=, >=**) [Шилдт-101]

Տրամաբանական օպերացիաներ (**&&, ||, !**) [Шилдт-101]

- Ֆոն Նեյմանի առաջարկած համակարգչի կարուցվածքի հիման վրա, հրամանները կատարվում են հաջորդաբար, իսկ թարգմանիչում դա արտահայտվում է վերևից ներքև զաղափարով (այսպես ասած ազդում է "գրավիտացիան"): Հրամանների կատարման հաջորդականությունը ուղղեկցվում է պայմաններով և ցիլկերով: Պայմանի ստեղծման ժամանակ օգտագործվում է նոր օպերացիաներ, որոնք փոփոխականների միջև կատարում են ինչպես համեմատում (**< ,>,==,!=, <=, >=**), այնպես էլ տրամաբանական միացում կամ խմբավորում (**&&, ||, !**) "և" "կամ" "ոչ" համակարգով:
- Հրամանները ունեն կատարման հետևյալ հաջորդականությունը - սկզբից ( ) կլոր փակագծեր, այնուհետև գալիս է տրամաբանական "և" **&&,** վերջապես տրամաբանական "կամ"**||**:
- ✓ Օրինակը ապացուցում է, որ **&&** ավելի առաջնային է, քան || օպերացիան.

```
using System;
class Program
{
    static void Main(string[] args)
    {
        int a = 999;
        char c = 'A';
        bool b = (16 > 8) || (a > 6) && (c == 'B');
        Console.WriteLine(b); //True
    }
}
```

Մեծացման և փոքրացման օպերացիաներ (**++, --**), *Պրեֆիքս և պոստֆիքս* [Шилдт- 98]

- **++** գործողությունը համակարգչում մեկով ավելանալու զաղափարն է առաջ տանում, որը նաև ապահովում է պրոցեսորի(CPU) ավտոմատ իրականացումը, ծրագրի հրամանների կատարման հաջորդականության տեսանկյունից: **++** գործողությունը կոչվում է "Increment", որի հակառակ գործողությունը (փոփոխականի պարունակությունը մեկով պակասացնելը) կոչվում է "Decrement":
- (**++, --**) գործողությունները կարելի է կիրառել ինչպես փոփոխականից առաջ, այնպես էլ հետո (prefix, postfix): Եթե (**++, --**) գործողությունները ուղղեկցվում են այլ հրամանների հետ, ապա այդ ժամանակ սկսում է դեր խաղալ (**++, --**) գործողությունների տեղը և որոշվում է, սկզբից կատարել այլ հրամանը հետո (**++, --**), թե հակառակը:
- a++;
  a=a+1;
  a+=1;

Նշված երեք հարմանները կատարում են նույն գործողությունը, ավելացնում են a փոփոխականը մկով: Եթե անհրաժեշտ է ավելացնել փոփոխականի արժեքը այլ թվով, ապա օգտագործվում է երկրորդ կամ երրորդ տարբերակը: a=a+5; կամ a+=5;

```
using System;
class Program
{
```

```
    static void Main(string[] args)
    {
        int a = 4;
        a++;
        Console.WriteLine(a);
        Console.WriteLine(++a);
        Console.WriteLine(a++);
        Console.WriteLine(a);
    }
}
```

- Օրինակում ծրագիրը կարտածի 5 6 6 7 հաջորդականությունը:

……

5.Պայմանական օպերատոր if, if….else

[Шилдт-121]

- Պայմանական օպերատորը հնարավորություն է տալիս կատարել ծրագրի հրամանների կատարման հաջորդականության ճյուղավորում կախված պայմանից:

```
using System;
class Program
{
    static void Main(string[] args)
    {
        int a=999;
        char c = 'A';
        if(a==999 && c=='A')
            Console.WriteLine("barev");
        else
            Console.WriteLine("again barev");
    }
}
//---------------------------------
```

- if պայմանական օպերատրում թույլատրվում է օգտագործել վերագրման (=) օպերատոր: Անհրաժեշտ է օգտվել ( ) կլոր փակագծերից:

```
        int a;
        if ((a = 88) > 0)
               Console.WriteLine("barev");
```

……

6.Պայմանական օպերատոր (?)

[Шилдт- 117]

- (?) պայմանական օպերատորը if… else օպերատորի նման կատարում է ծրագրում ճյուղավորման աշխատանք: Ինչպես նաև ունի առանձնահատկություն, օգտագործվել ֆունկցիաների (մեթոդների) պարամետրերում և առանձնահատուկ տեղերում:

```
using System;
class Program
{
        static void Main(string[] args)
        {
            int a = 5;
            int c = (a > 0) ? 44 : 99;
            Console.WriteLine(c);
            Console.WriteLine((a < 0) ? 55 : 77);
        }
}
```

……

7.Ցիկլիկ օպերատորներ - while, do… while, for

[Шилдт-129]

- Ցիկլիկ օպերատորը հնարավորություն է տալիս ծրագրի որևէ հատված կրկնել և այդ հնարավորությունն է ստիպում համակարգչին լուծել բարդ խնդիրներ: Առաջին ծրագրավորողը համարվում է Ադա Բայրոնը, ով և առաջարկել է ցիկլի գաղափարը:
- while օպերատորը ստուգում է պայմանը և կատարում ցիկլը:
- do… while օպերատորը սկզբից կատարում է ցիկլը, հետո ստուգում պայմանը և դուրս է գալիս ցիկլից պայմանը չբավարարվելու դեպքում:
- for օպերատորը օգտագործվում է այն դեպքում, երբ առկա է որևէ փոփոխականի սկզբնական արժեք, նրա մեծության ստուգման պայման և փոփոխականի ինքնամեծացում կամ փոքրացում: Այլ խոսքով երեք էրնեկ մի տեղ:
- Ցիկլերը, ինչպես նաև if օպերատորը ունեն առանձնահատկություն: Զևավոր փակագծեր պարտադիր են, եթե ցիկլը ունի միակ հրաման տիպի հայտարարումով: Հաջորդ օրինակը առանձնահատուկ դեպք է.

```
 static void Main(string[] args)
 {
     for (int i = 0; i < 5; i++)
    // {
         // //System.Console.WriteLine();
         int a=99; //error
     //}
 }
```

- Հավերժ ցիկլեր կարելի է ստանալ while(true) կամ for(; ;) հրամաններով:

```
using System; // do… while
class Program
{
        static void Main(string[] args)
        {
            int a = -10;
            do
            {
                Console.WriteLine("barev");

            } while (a > 0);
        }
}
//-----------------------------------
using System; // while,   for
class Program
{
    static void Main(string[] args)
    {
        int n = 8;
        int sum = 0;
        int i = 0;
        while (i <= n)
        {
            sum = sum + i;
            i++;
        }
        Console.WriteLine(sum);
        sum = 0;
        for (int i2 = 0; i2 <= n; i2++)
            sum = sum + i2;
        Console.WriteLine(sum);
}   }
```

```
//-----------------------------------
using System; // n թվի  թվանշանների  գումար // կիսատնային
class M
{
    static void Main(string[] args)
    {
        for (; ;)
        {
            int sum = 0;
            Console.Write("tiv = ");
            int n = Convert.ToInt32(Console.ReadLine());
            int tiv = 0;
            while (n > 0)
            {
                tiv = n % 10;
                n = n / 10;
                Console.Write(tiv+"  ");
                sum += tiv;
            }
            Console.WriteLine("gumar = "+sum);
        }
    }
}
//-----------------------------------
// n թվի  թվանշանների  առանձնացում և ցուցադրում նույն հաջորդականությամբ – (տնային)
// Պարզ թվի որորշում – (տնային)
Ֆիբոնաչիի շարք 1, 1, 2 , 3, 5, 8, 13, 21, 34, 55 ……..
Շարքի առաջին երկու անդամները հավասար են 1: Մնացած անդամները որոշվում են նախորդ երկու անդամների գումարով:
// Ֆիբոնաչիի շարքի անդամի որոշում – (տնային)
//-----------------------------------
using System; // n թվի  թվանշանների  առանձնացում – (տնային)
class M
{
    static void Main(string[] args)
    {
        for (; ;)
        {
            Console.Write("tiv = ");
            int n = Convert.ToInt32(Console.ReadLine());
            int tvanshan = 0;
            int nn = n;
            int k = 0; // թվանշանների քանակ
            while (n > 0)
            {
                n = n / 10;
                k++;
            }
            Console.WriteLine("tvanshanneri qanak  = "+k);
            int kk = 1; // թվի կարգայնություն
            for (int i = 1; i < k;i++ )
                kk*=10;
            Console.WriteLine("kargaynutiun = "+kk);
            for (int i = 0; i < k;i++ )
            {
                tvanshan = nn / kk;
                nn = nn % kk;
                kk = kk / 10;
```

```
                Console.Write(tvanshan + "  ");
            }
            Console.WriteLine();
        }
    }
}
//-----------------------------------

using System; // Ֆիբոնաչի
class M
{
    static void Main(string[] args)
    {
        for (; ; )
        {
            Console.Write("tiv = ");
            int n = Convert.ToInt32(Console.ReadLine());
            int a1 = 1;
            int a2 = 1;
            int fib = 0;
            Console.Write(a1+" ");
            Console.Write(a2+" ");
            for (int i = 2; i < n;i++ )
            {
                fib = a1 + a2;
                Console.Write(fib+" ");
                a2 = a1;
                a1 = fib;
            }
            Console.WriteLine();
        }
    }
}
```

……

8.Անցումային օպերատորներ – break, continue, goto

[Шилдт-139]

- Ցիկլերում թույլատրվում է օգտագործել break օպերատորը, որը ցիկլից դուրս է բերում ծրագրի հատվածը:
- continue օպերատորի կատարման ժամանակ բաց է թողնվում նրան հաջորդող բոլոր հրամանները, սակայն ցիկլից դուրս չի գալիս ծրագիրը:
- goto օպերատորը կատարում է թռիչք ծրագրի ցանկացած մասից ցանկացած այլ մաս, նշված “մետկայով:”: Ժամանակակից լեզուներում խորհուրդ չի տրվում օգտագործել այս օպերատորը, որովհետև կա ծրագրավորման դառը փորձ, այսպես կոչված “սպագետտի կոդ”, որի իմաստը կայանում է հետևյալում. երբ շատ goto - ներ եք օգտագործում, ապա ծրագրային կոդը խճճվում է՝ բերելով ծրագրի խափանման:

```
using System; // break
class Program
{
        static void Main(string[] args)
        {
            int a = 5;
            while (true)
            {
                Console.WriteLine("barev");
                a--;
```

```
                if (a <= 0)
                    break;
            }
        }
}
// ------------------------------------
using System; // continue
class Program
{
        static void Main(string[] args)
        {
            int a = 8;
            while (a>0)
            {
                Console.WriteLine("barev");
                a--;
                if (a >=3)
                    continue;
                Console.WriteLine("barev2222");
            }
        }
}
// ------------------------------------
using System; // if + goto = ցիկլ
class Program
{
        static void Main(string[] args)
        {
            int a = 5;
         aa:
            if (a > 0)
            {
                Console.WriteLine("barev");
                a--;
                goto aa;
            }
        }
}
```

……

9.Բիթային օպերացիաներ (|, &, ~, ^, <<, >>)

[Шилдт-107]

- Կա հետևյալ պատմությունը: Pascal և C լեզուների պայքարի ժամանակ հաղթող դուրս եկավ C լեզուն, որը գրավեց և արտադրական ծրագրավորումը և ուսման մեջ կիրառումը: C լեզվի հաղթանակի հիմքերում է ընկած այնպիսի բարդ հնարավորություններ, ինչպիսին են բիթային օպերացիաները, կամ ասենք հասցեներով աշխատելու հնարավորությունները ցուցիչների և հղիչների միջոցով: Նշված գործողությունները համարվում էին ասեմբլեր լեզվի յուրահատկություններ և ուսուցման տեսանկյունից տանում են դժավարությունների:
- Բիթաին օպերացիաները նույնպես կիրառվում է C#sharp լեզվում: Այն հարավորություն է տալիս աշխատել բիթերի մակարդակով, որը կարելի է կիրառել ինչպես տրամաբանական խնդիրներում, այնպես էլ տարբեր արտաքին միջավայրներում (ասենք արտաքին սարքեր), որտեղ գործում են միջավայրի անհատական հրամանները: Այդ հրամանները շատ ավելի հեշտ ղեկավարվում են բիթային օպերացիաների միջոցով: Օրինակ արտաքին սարքին կարելի է ուղղարկել տարբեր կոդեր,

որոնք այդ սարքի համար դառնում են հրամաններ: Այդպիսի ծրագրային իրականացումը կոչվում է սարքի “driver” ծրագիր:

✓ | բիթային “կամ” աշխատում հետևյալ ձևով

0 կամ 0 հավասար է 0;
0 կամ 1 հավասար է 1;
1 կամ 0 հավասար է 1;
1 կամ 1 հավասար է 1;

✓ & բիթային “և” աշխատում հետևյալ ձևով

0 և 0 հավասար է 0;
0 և 1 հավասար է 0;
1 և 0 հավասար է 0;
1 և 1 հավասար է 1;

✓ ^ բիթային բացառում ըստ “կամ” ի աշխատում հետևյալ ձևով

0 ^ 0 հավասար է 0;
0 ^ 1 հավասար է 1;
1 ^ 0 հավասար է 1;
1 ^ 1 հավասար է 0;

✓ <<, >> բիթային շեղում աջ կամ ձախ

հնարավորություն է տալիս ըստ նշված տասական թվի չափի, 2 ական կոդը տեղաշարժել աջ կամ ձախ: Երկու դեպքում էլ աջից կամ ձախից կատարվում է տվյալի կորուստ, անհայտ բիթերում լրացնելով զրոներ:

✓ ~ բիթային ժխտում

Նշված երկուական կոդում զրոները փոխվում է մեկերով, իսկ մեկերը զրոներով: Պարզ է, եթե դրական թիվ է ժխտվում, ապա նրա նշանը նույնպես ժխտվում է, որի պատճառով թիվը դառնում է բացասական: Համակարգիչը բացասական թվերը ներկայացնում է իր ձևով:

```
//.... 0000 0001  = 1
//... .0000 0000  = 0
//.... 1111 1111  = -1
//.... 1111 1110  = -2
//.... 1111 1101  = -3
//.... 1111 1100  = -4
using System;
class Program
{
    static void Main(string[] args)
    {
        int a = 5;//..... 0000 0101
        int b = 3;//..... 0000 0011
        int c = a & b;// բիթային տրամաբանական "և" օպերացիա
        Console.WriteLine(c); //..... 0001 =1
        c = a | b;// բիթային տրամաբանական "կամ" օպերացիա
        Console.WriteLine(c); //..... 0111 = 7
        c = a ^ b;// բիթային տրամաբանական բացառում ըստ "կամ" օպերացիայի
        Console.WriteLine(c); //..... 0110 = 6
        c =  a>>1;// բիթային տրամաբանական շեղում աջ մեկ բիթ
        Console.WriteLine(c); //..... 0010 = 2
        c = a << 1;// բիթային տրամաբանական շեղում ձախ մեկ բիթ
        Console.WriteLine(c); //..... 1010 = 10
        c = ~b;//.... 1111 1100  = -4 // բիթային ժխտման օպերացիա
        Console.WriteLine(c);// -4  // ....1111 1100 = fc
        Console.WriteLine(string.Format("{0:x}", c)); // ffffffc
        //.... 0000 0001  = 1
```

```
        //... .0000 0000  =  0
        //.... 1111 1111  = -1
        //.... 1111 1110  = -2
        //.... 1111 1101  = -3
        //.... 1111 1100  = -4
    }
}
```

……

10.switch օպերատոր

[Шилдт-125]

- switch օպերատորը փոխարինում է if… else օպերատորին, եթե անհրաժեշտություն կա միաժամանակ ստուգել մեծ քանակով պայմաններ:

```
using System;
class Program
{
        static void Main(string[] args)
        {
            int a;
             for (; ;)
             {
                 Console.WriteLine("tiv = ");
                 a = Convert.ToInt32(Console.ReadLine());
                 switch (a)
                 {
                     case 1: Console.WriteLine("1111111");
                         goto aa;
                         break;
                     case 2:
                     aa: Console.WriteLine("2222222");
                         break;
                     case 3: Console.WriteLine("3333333");
                         break;
                     default: Console.WriteLine("barev");
                         break;
                 }
             }
        }
}
```

- Հաջորդ օրինակը ցույց է տալիս, թէ ինչպես կարելի է case ում ոչինչ չգրել: Այս դեպքը թույլատրելի է և հնարավորություն է տալիս մի քանի պայմաններ կատարեն նույն գործողությունը:

```
using System;
class Program
{
    static void Main(string[] args)
    {
        int n = 2;
        switch (n)
        {
            case 1:
            case 2:
            case 3:
                Console.WriteLine("barev");
                break;
        }
    }
}
```

11.Տիպերի վերափոխման օպերատոր ( )

[Шилдт-89]

- Տիպերի վերափոխումը, որը օգտագործում է ( ) փակագծերը, կարելի է անվանել օպերատոր, այլ ոչ թէ օպերացիա, իր կարևորության և բարդության հետ կապված: Տվյալները ստանալով տիպեր, ծրագրի կատարման ժամանակ անցնում են տարբեր թույլատրելի տարածքներով: Նշված տարածքները կարող են լինել տարբեր տիպեր: Անցումները տարածքներում կարող են լինել մեծից փոքր և փոքրից մեծ: Փոքրից մեծ անցումը բնական է կատարվում առանց որևէ միաջամտման, իսկ մեծից փոքրի դեպքում, հնարավոր է տեղի ունենա տվյալների կորուստ: Դրա համար, եթե ծրագրավորողը օգտագործում է կլոր փակագծեր ( ) տիպերի վերափոխարկաման օպերատորը, ապա թարգմանիչը շարունակում է աշխատանքը, չհամարելով այն սխալ:
- Նշենք, որ տիպերի վերափոխարկում կարելի է կատարել ոչ բոլոր տիպերի միջև (օրինակ bool ից int հնարավոր չէ), այլ կարելի է միայն միևնույն ընտանիքի տիպերի միջև (օրինակ բոլոր թվային տիպերի միջև - byte, sbyte, short, ushort, int, uint, long, ulong, float, double, decimal):

……

12.C/C# պարզ տարբերություններ

[Шилдт-97, 121]

Նշենք C# -ի որոշ նորույթ առավելություններ C/C++ լեզվի նկատմամբ, նրա պրոցեդուրային մասով:

- Verbatim string

```
WriteLine ( @"text
                    text 2");
```

կարելի է գրել մի քանի տող, որը պահում է ընդհանուր տեսքը և տողում թույլատրում է "Enter":

- C - թույլատրում է չարժեքավորված լոկալ փոփոխականի հետ աշխատել, իսկ C# - ոչ;
- C - թույլատրում է բլոկում փոփոխականի անունը համընկնի բլոկից դուրս, ուղղակի նա ծածկում է նրան և եթե գլոբալ է, կարելի է միայն :: կետի օգնությամբ տեսանելիությունը մեծացնել: C# ում սա չի թույլատրվում:
- C- ում % թվաբանական գործողությունը միայն ամբողջ թվերին է թույլատրվում: C#-մ նաև կոտորակային թվերին:
- C# -ում տրամաբանական արտահայտությունը վերադարձնում է միայն true կամ false : Այդ դեպքում (==) – հնարավոր չէ խառնել (=) – ի հետ, որովհետև պայմանը միշտ վերադարձնում է true կամ false:
- Տրամաբանական արտահայտության կրճատված (&&,||) և ոչ կրճատված (&,|) պայմաններ: (&,|) համարվում է բիթային օպերացիա և կախված արտահայտությունից միաժամանակ կարող է դառնալ ոչ կրճատված տրամաբանական օպերացիա: Ոչ կրճատված նշանակում է տրամաբանական արտահայտության բոլոր անդամները ստուգվում են, եթե նույնիսկ արտահայտության արդյունքը հայտնի է լինում ավելի շուտ:

```
static void Main()
{
    int a = 9;
    // if(4>8&&9<0&6>0&&88==88&&a++>8)
    if(4>8&9<0&6>0&88==88&a++>8)
        Console.WriteLine("barev");
    Console.WriteLine(a);
}
```

- switch – ի պարամետր C# -ում ընդունում է նաև string և enum; C# break - ը համարվում պարտադիր: Եթե break չկա, ապա goto case n:
- for – ի պայմանում տեսանելիության տիրույթը նույնպես ընդգրկվում է է բլոկի սահմանում: C- ում այդպես չէ: Օրինակում նշվածը չի բերում սխալի, իսկ C լեզվում երկրորդ int հայտարարումը պետք է հանել:

```
static void Main(string[] args)
```

```
        {
            for (int i = 0; i < 8; i++)
            {              }
            for (int i = 0; i < 8; i++)
            {             }
        }
```

- int @for = 55; int @new = 19; Կարելի է @ նշանի օգնությամբ հատուկ անունը օգտագործել որպես փոփոխականի անուն:

……..……..……..……

13.Զանգված

[Троелсен-160; Нейгел- 184; Нэш-248; Рихтер-406]

- Զանգվածը տվյալների կազմակերպման այնպիսի ձև է, երբ անհրաժեշտ է միևնույն տիպի տվյալները պահել համարակալված (կոլեկցիայի ձևով): Զանգվածների հետ աշխատանք կատարվում է **ինդեքսով**: Հայտարարման ձևը՝

int [ ] myArray = new int [5]; վեկտոր

int [ ] myArray = { 2, 4, 6, 8, 10 }; վեկտորի հայտարարում և վերագրում

int [,] myArray = new int [8,8]; մատրիցա

- Զանգվածը հայտարարման ժամանակ ընդունում է ըստ տիպի լռելիության արժեքներ:
- Զանգվածի սահմանները գտնվում են հսկման տակ և չափը նշվում է **Length** հատկանիշի միջոցով:

```
using System; //պատահական թվերի վեկտոր
class M
{
    static void Main()
    {
            int[] A = new int[8];
            Random r = new Random();
            for (int i = 0; i < 8; i++)
                A[i] = r.Next(10);
            for (int i = 0; i < A.Length; i++)
                Console.Write(A[i] + "  ");
    }
}
//--------------------

using System; // մաքսիմումի փնտրում
class M
{
    public static void Main()
    {
        Random r = new Random();
        int[] A = new int[10];
        for (int i = 0; i < 10; i++)
            A[i] = 50-r.Next()%100;
        int max=A[0];
        for (int i = 0; i < 10;i++ )
            Console.Write(A[i] + " ");
        for (int i = 0; i < 10; i++)
            if (A[i] > max)
                max = A[i];
        Console.WriteLine();
        Console.WriteLine("max = " + max);
    }
}
```

```
//--------------------

using System; // վերադասավորում
class M
{
    static void Main()
    {
        int n=16;
        int[] A = new int[n];
        Random r = new Random();
        for (int i = 0; i < n; i++)
            A[i] = r.Next(100);
        for (int i = 0; i < n; i++)
            Console.Write(A[i] + "  ");
        Console.WriteLine();
        int a;
        for (int v = 0; v < n;v++ )
            for (int i = 0; i < n - 1; i++)
            {
                if (A[i] > A[i + 1])
                {
                    a = A[i];
                    A[i] = A[i + 1];
                    A[i + 1] = a;
                }
            }
        for (int i = 0; i < n; i++)
            Console.Write(A[i] + "  ");
        Console.WriteLine();
    }
}
//Տնային հատվածը
                    a = A[i];
                    A[i] = A[i + 1];
                    A[i + 1] = a;
իրականացնել առանց a փոփոխականի
//--------------------

using System; //մատրիցայի  ցուցադրում
class M
{
    static void Main()
    {
        int[,] A = new int[8,8];

        for (int i = 0; i < 8; i++)
        {
            for (int j = 0; j < 8; j++)
                Console.Write(A[i, j]+" ");
            Console.WriteLine();
        }
    }
}
//--------------------

using System; //մատրիցայի  ցուցադրում անհրաժեշտ “պրոբելով”
class Program
{
    static void Main(string[] args)
```

```
    {
        int n = 8;
        Random r = new Random();
        int[,] A = new int[n, n];
        for (int i = 0; i < n; i++)
            for (int j = 0; j < n; j++)
                A[i, j] = r.Next(1, 100);
        Console.WriteLine();
        for (int i = 0; i < n; i++)
        {
            for (int j = 0; j < n; j++)
                if (A[i, j] > 9)
                    Console.Write(A[i, j] + " ");
                else
                    Console.Write(A[i, j] + "  ");
            Console.WriteLine();
            Console.WriteLine();
        }
    }
}

//---------------------

using System; // նավակի հարվածներ
class M
{
    static void Main()
    {
        int[,] A = new int[8,8];
        Console.Write("navi y= ");
        int a = Convert.ToInt32(Console.ReadLine()); // կոորդինատ i
        Console.Write("navi x= ");
        int b = Convert.ToInt32(Console.ReadLine()); // կոորդինատ j
        for (int k = 0; k < 8; k++)
        {
            A[a-1, k] = 1;
            A[k, b-1] = 1;
        }
        for (int i = 0; i < 8; i++)
        {
            for (int j = 0; j < 8; j++)
                Console.Write(A[i, j]+" ");
            Console.WriteLine();
        }
    }
}

// (տնային) ցուցադրել փղի հարվածները մատրիցայում
// (տնային) ցուցադրել ձիու հարվածները մատրիցայում
// (տնային) ցուցադրել թագուհու  հարվածները մատրիցայում
// (տնային) Լուտո 36: 9x6 մատրիցայում պատահական ձևով լրացնել 36 չկրկնվող թվեր:

//-----------------------

using System; // շախմատ, փղի քայլեր
class M
{
    static void Main()
    {
```

```
        int[,] a = new int[8, 8];
        Console.Write("x=");
        int x = Convert.ToInt16(Console.ReadLine());
        Console.Write("y=");
        int y = Convert.ToInt16(Console.ReadLine());
        int ii = 0;
        int jj = 0;
        while (x + ii < 8 && y + jj < 8)
        {
            a[x + ii, y + jj] = 1;
            ii++;
            jj++;
        }
        ii = 0;
        jj = 0;
        while (x - ii >= 0 && y - jj >= 0)
        {
            a[x - ii, y - jj] = 1;
            ii++;
            jj++;
        }
        ii = 0;
        jj = 0;
        while (x + ii < 8 && y - jj >= 0)
        {
            a[x + ii, y - jj] = 1;
            ii++;
            jj++;
        }
        ii = 0;
        jj = 0;
        while (x - ii >= 0 && y + jj < 8)
        {
            a[x - ii, y + jj] = 1;
            ii++;
            jj++;
        }
        for (int i = 0; i < 8; i++)
        {
            for (int j = 0; j < 8; j++)
                Console.Write(a[i, j] + " ");
            Console.WriteLine();
        }
        Console.ReadKey();
    }
}
//-----------------------

using System; // Loto 36
class Program
{
    static void Main(string[] args)
    {
        Random r = new Random();
        int[,] A = new int[4, 9];
        int[] V = new int[36];
        int k = 1;
        int m = 0;
        for (int i = 0; i < 4; i++)
            for (int j = 0; j < 9; j++)
```

```
            {
            gg:
                while (true)
                {
                    k = 1 + r.Next() % 36;
                    for (int ii = 0; ii < m; ii++)
                        if (k == V[ii])
                            goto gg;
                    A[i, j] = k;
                    V[m] = k;
                    m++;
                    break;
                }
            }
        for (int i = 0; i < 4; i++)
        {
            for (int j = 0; j < 9; j++)
                if (A[i, j] > 9)
                    Console.Write(A[i, j] + " ");
                else
                    Console.Write(A[i, j] + "  ");
            Console.WriteLine();
            Console.WriteLine();
        }
    }
}
```

Տնային մատրիցաներից

- Թամբային կետ: Տրված է ամբողջթվային MxN չափի մատրիցը: Որոշել և արտածել մատրիցի այն տարրը, որը իր տողում մեծագույնն է, իսկ սյունում փոքրագույնը: Եթե այդպիսի տարր չկա, ապա արտածել “NO” հաղորդագրությունը:
- Տրված է NxN չափի քառակուսային մատրից: Առանց լրացուցիչ մատրից կիրառելու տեղերով փոխել $A_{1,1}$ և $A_{N,N}$, $A_{1,2}$ և $A_{N,N-1}$ և այլն տարրերը, այսինքն օժանդակ անկյունագծի նկատմամբ իրականացնել հայելային արտապատկերում: Արտածել ստացված մատրիցը:
- Տրված է MxN չափի մատրից: Արտածել մատրիցի կենտ համարով տողերի տարրերը ձախից աջ հաջորդականությամբ, իսկ զույգ համարովները՝ աջից ձախ հաջորդականությամբ:
- Տրված է MxN չափի մատրիցը: Հաշվել և արտածել մատրիցի ամեն տողերի փոքրագույն տարրերից մեծագույնի արժեքը:
- Տրված է A մատրիցա: Գտնել B վեկտորի տարրերը, որտեղ b_i - ն ստացվում է A մատրիցայի i - րդ տողի առաջին բացասական տարրից հետո եկող անդամների գումարից:

Ֆունկցիոնալ ծրագրավորում

14. Ծրագրավորման լեզուների զարգացման էտապները



- Ծրագրավորումը սկզբից եղել է **երկուական** տեսքի հրամաններով: Ծանրագույն ժամանակներ: Աշխատանք մեքենայական ձևով: Արագ անհրաժեշտություն առաջացավ մարդկայնացնել ծրագրավորումը և այն բերեց լեզվի հնարման անհրաժեշտության: Այն կոչվեց **ասեմբլեր** լեզու: Ասեմբլերի ամեն հրաման համապատասխանում է երկուական լեզվի մեկ հրամանի: Պարզ է, լեզվի առկայությունը պահանջեց թարգմանիչի անհրաժեշտության և այսպես առաջացավ ասեմբլեր թարգմանիչը:
- Հաջորդ էտապը առաջացավ արտադրողականության բարձրացման բնական պահանջի վրա: Գյուղատնտեսությունում այն կոչվում է ռենտայի օրենք - մեկ կարտոֆիլ զցիր ութը ստացիր: Ծրագրավորումը այն օգտագործեց հետևյալ ձևով - մեկ հարմանը կկատարի մկից ավել մեքենայական հրամաններ: Հաջորդ լեզուները անվանվեցին բարձր կարգի լեզուներ կամ **ալգորիթմական լեզուներ,** իրենց հետ բերելով սեփական թարգմանիչները:
- Ինչ է **ֆունկցիոնալ** ծրագրավորում: Նա անհրաժեշտություն էր ալգորիթմականից հետո: Քանի, որ ծրագրավորման խնդիրները անընդհատ պահանջում են ավելի շատ հրամանների առկայություն, ապա ալգորիթմական լեզուները ծրագրի հրամանների խճճման պատճառով մի պահից սկսած չէին կարող բավարարել խնդրի լուծման աշխատանքային պահանջները: Նույնիսկ ընդունելի անուն ստացավ պրոբլեմը, որը անվանվեց "**սպագետի**" կոդ: Խնդրի լուծման համար առաջարկվեց ծրագրի հրամանները խմբավորել, ասենք ֆունկցիաների ձևով և ստանալ ոչ միայն որոշ թրիչքների խզում, այլ նաև կոդի բազմակի օգտագծման հնարավորություն ֆունկցիաների ձևով: Ֆունկցիոնալ ծրագրավորումը ստացավ տարբեր անվանումներ և զարգացումներ, որոնցից են կառուցվածքային կամ մոդուլային անվանումները: Պետք է հիշել մի շատ կարևոր աքսիոմա, - լեզուները առաջանաում են, որովհետև հին ձևով անհնար է "ապրել", ծրագրի հրամանների անվերջ աճման պահանջի պատճառով: Ցանկացած նոր ետապ **"քաոսից"** դուրս գալու հնարք է: Այլ խոսքով ամեն էտապ պայքարում է **էնտրոպիայի** դեմ: (էնտրոպիա – քաոսի չափման միավոր):
- Հաջորդ էտապը կոչվում է **օբյեկտ-կողմնորոշված** ծրագրավորում: Այն բարձրացնում է ծրագրավորման **աբստրակցիան**: Քանի, որ ֆունկցիոնալ ծրագրավորումը հրամանների մեծ քանակի դեպքում բերում է խճճում ֆունկցիաների մակարդակով: Աներաժեշտություն առաջացավ

այդ ֆունկցիաները **պարփակել** ծրագրավորման մի այլ միավորի մեջ, որը անվանվեց **կլաս** (դաս): Միավորումը իրականացվեց նորամուծությամբ, այն է, ֆունկցիաների հետ ընդգրկվեցին (իրենց կանայք) նաև տվյալներ:

- Չպետք է մոռանալ, որ այժմ ծրագրավորումը գտնվում է օբյեկտ կողմնորոշված տիրույթում, սակայն կարելի է ավելացնել, որ Microsoft -ի կողմից առաջարկված **ղեկավարման կոդի** միջավայրում ծրագրավորումը իր ուղղությունն է հարթում նոր ժամանակներում: Microsoft –ի նոր "պրոյեկտի" անունը կոչվում է .NET կամ **dotNET**:

……..…….

15.Մեթոդներ

[Шилдт-155]

Մեթոդի պարամետրեր, արգումենտներ *[Шилдт-162]*

Մեթոդի վերադարձվող արժեք *[Шилдт-159]*

return օպերատոր *[Шилдт-158]*

- Ծրագրի ֆունկցիոնալ գործողությունների շարքին է պատկանում մեթոդը: Պարզագույն ներկայացման ձևը՝

```
void ff()
{
        // հրամաններ
}
```

Որտեղ մեթոդը ունի անուն ff, վերադարձվող արժեք `void` և կլոր փակագծեր ( ): `void` գրվում է այն դեպքում, երբ մեթոդը ոչինչ չի վերադարձնում:

- Ընդանրապես ցանկալի է և գործողության հնարավորությունները մեծ են, եթե մեթոդը կարող է ստանալ տվյալներ, որոնք կոչվում են մեթոդի պարամետրեր և եթե մեթոդը վերադարձնում է արժեք: Մեթոդը պարամետրեր ստանում է կլոր փակագծերում և արժեք վերադարձնում է `return` հրամանով: Այդ դեպքում անպայման նշվում է վերադարձվող արժեքի տիպը (int, bool double), որը գրվում է մեթոդի անունից ձախ և պետք է գտնվի համաձայնության մեջ `return` հրամանի հետ:

```
int ff(int a, char c)
{
       // հրամաններ
       return   հրաման; // int տիպ պետք է լինի
}
```

- Ծրագիրը իր ստարտը սկսում է `Main()` մեթոդի կատարումով, որը ենթարկվում է օպերացիոն համակարգի կանչին:

```
class Program
{
    static void Main()
    {
    }
}
//-------------------------------------------------

using System; // պարամետր և վերադարձվող արժեք
class A
{
        int a;
        int b;
        char c;
        public  int ff(int aa,char cc, int bb)
        {
            System.Console.WriteLine("barev !");
            a = aa;
            b = bb;
```

```
            c = cc;
            Console.WriteLine(c);
            return a + b;
        }
    }
    class Program
    {
       static void Main()
        {
            A ob = new A();
            ob.a = 333; // error !
            int sum=ob.ff(333,'W',555);
            Console.WriteLine("gumar = " +sum);
        }
     }
}
//-----------------------------------------------
```

- **return** հրաման կարելի է օգտագործել նաև void ոչինչ չվերադարձվող արժեքի հետ: Այն չունի հաջորդող տվյալ կամ հրաման և ուղղակի դուրս է բերում ծրագիրը մեթոդից:

```
using System;
class A
{
        public void f()
        {
            return;
            Console.WriteLine("barev");
        }
}
class Program
{
        static void Main(string[] args)
        {
            A ob = new A();
            ob.f();
        }
}
//-----------------------------------------------
```

- Պայմանավորվենք: Եթե մեթոդը նկարագրվում է, ապա այն ունի պարամետրեր տվյալներ ստանալու համար: Եթե մեթոդը կանչվում է, ապա պարամետրերը կկոչվեն արգումենտներ:
- Մեթոդը արգումենտում կարող է ստանալ այլ մեթոդ, եթե արգումենտի մեթոդի վերադարձվող արժեքի տիպը համընկնում է մեթոդի պարամետրի տիպին:

```
using System;
class A
{
    public void f(int a) //մեթոդի նկարագրություն
    {
        Console.WriteLine(a);
    }
    public int f2()
    {
        return 2015;
    }
}
class Program
{
    static string f()
```

```
    {
        return "albdarb.com";
    }
    static void Main(string[] args)
    {
        A ob = new A();
        byte[] valueBytes = BitConverter.GetBytes(packedValue);
        foreach(byte x in valueBytes)
            Console.WriteLine(x);
        Console.WriteLine("----------------");
        short value1, value2;
        value1 = BitConverter.ToInt16(valueBytes, 0);
        value2 = BitConverter.ToInt16(valueBytes, 2);
        Console.WriteLine(value1);
        Console.WriteLine(value2);
    }
}
```

.....

70.Ժառանգական կապվածությամբ տիպերի վերափոխարկում

[Троелсен-434,403;Нейгел-233]

- Տարբեր տիպեր, որոնք ստեղծվում են օգտագործողի կողմից (կլասներ, ստրուկտուրաներ), չի թույլատրվում կատարել վերագրում: Սակայն կարելի կատարել վերագրում, եթե այդ տիպերը կապված են ժառանգականությամբ: Վերագրել այդ դեպքում կարելի է սովորական ձևով կամ ակնհայտ ձևով օգտագործելով կլոր փակագծեր:

```
class A
{
}
class B : A
{
}
class M
{
    static void Main()
    {

        A a = new A();
        B b = new B();
        a = b; //ok
        //b = a; // error
        b = (B)a; // ok
        //-----------------------------------
        // Implicit cast between derived to base.
        A aa = new B(); // սովորական ձև
        // Must explicitly cast to store base reference in derived type.
        B bb = (B)aa; // ակնհայտ ձև
    }
}
```

.....

71.Հղում բազային կլասով

[Шилдт-251]

- Նույն կլասի տարբեր օբյեկտների ցուցիչներ կարելի է վերագրել, իսկ տարբեր կլասների ոչ: Եթե նրանք ժառանգականությամբ են կապված, ապա կա բացառություն: Բազային ցուցիչին կարելի է վերագրել ժառանգի ցուցիչ: Այդ դեպքում նա հղում է ժառանգ կլասին: Այդ ժառանգ ցուցիչով կարող է դիմել բազային կլասի անդամներին, իսկ ժառանգի անդամներին միևնույնն է ոչ:

```
using System;
class A
{
    public int a = 9;
}
class B : A
{
    public int b = 88;
}
class M
{
    public static void Main()
    {
        A obA = new A();
        B obB = new B();
        Console.WriteLine(obA.a);
        obA = obB;
        //obB=obA; //error
        obA.a = 44;
```

output
9
44

```
        Console.WriteLine(obA.a);
        //obA.b=55;//error
    }
}
```

72.Վիրտուալ մեթոդներ, Պոլիմորֆիզմ (Polymorphism)

[Шилдт-335, 43; Троелсен-245]

- Եթե անհրաժեշտ է բազային ցուցիչով դիմել ժառանգ կլասի մեթոդներրին, ապա մեթոդները պետք է լինեն և բազայինում և ժառանգում, ունենան նույն անունը, պարամետրերը և բազայինը լինի վիրտուալ:
- Առանց վիրտուալ մեթոդի բազային ցուցիչին կարելի է վերագրել ածանցյալ կլասի ցուցիչ և բազային ցուցիչով կարելի է դիմել միայն բազային անդամներին: Եթե նույն անունով մեթոդ կա, ապա այդ մեթոդը վիրտուալացնելով կարելի է հնարավորությունը մեծացնել - դիմել ածանցյալ կլասին:
- Այսպիսով - բազային ցուցիչով կարելի է դիմել ածանցյալ կլասի նույն անունով մեթոդներին:
- virtual – բազային մեթոդի սպեցիֆիկատր
- override – ժառանգ մեթոդի սպեցիֆիկատր

```
using System;
class A
{
    public virtual void ff()
    {
        Console.WriteLine("ffA  ");
    }
}
class B : A
{
    public override void ff()
    {
        Console.WriteLine("ffB  ");
    }
}
class D : A
{
    public override void ff()
    {
        Console.WriteLine("ffD  ");
    }
}
class M
{
    public static void Main()
    {
        A ob = new A();
        ob.ff();
        B ob2 = new B();
        ob = ob2;
        ob.ff();
        D ob3 = new D();
        ob = ob3;
        ob.ff();
    }
}
```

```
output
ffA
ffB
ffD
```

Պոլիմորֆիզմ (Polymorphism) [Троелсен-245; Шилдт-43]

- Բազմա - ձևություն: Գաղափարը վերցրված է “բիոլոգիայից”:
- Թարգմանման ժամանակ պոլիմորֆիզմ (ստատիկ պոլիմորֆիզմ) – իրագործվում է գերբեռնված մեթոդների միջոցով:
- Կատարման ժամանակ պոլիմորֆիզմ (դինամիկ պոլիմորֆիզմ) - իրագործվում է վիրտուալ մեթոդների օգնությամբ:



……

73.Տիպերի վերափոխարկում implicit, explicit

[Троелсен-435,403; Нейгел-230]

- Եթե անհրաժեշտ է տարբեր տիպերի օբյեկտներ վերագրել, որոնք կապված չեն ժառանգականությամբ, ապա պետք է օգտագործել օպերատորների գերբեռնում: implicit –ի միջոցով կատարվում է տիպերի թաքնված (ենթադրյալ) վերափոխարկում: explicit –ի միջոցով կատարվում է տիպերի բացահայտ վերափոխարկում ( ) փակագծի օգտագործումով:

```
using System; // implicit
namespace ConsoleAppImplicit
{
    class A
    {
        public uint dollar;
        public ushort cent;
        public A(uint d, ushort c)
        {
            dollar = d;
            cent = c;
        }
        public static implicit operator float(A ob) // **
        {                                           //
            return ob.dollar + ob.cent/100f;        //
        }                                           //
    }
    class Program
    {
        static void Main(string[] args)
        {
```

```
            A ob = new A(55, 99);
            float f = ob;// ** error!!
            Console.WriteLine(f);
        }
    }
}
//-----------------------------------------
using System; // explicit
namespace ConsoleAppExplicit
{
    class A
    {
        public uint dollar;
        public ushort cent;
        public A(uint d, ushort c)
        {
            dollar = d;
            cent = c;
        }
        public static explicit operator A(float f)   // **
        {                                            //
             uint  dd= (uint)f;                      //
             ushort cc = (ushort)((f-dd)*100);       //
             return   new A(dd,cc);                  //
        }
    }
    class Program
    {
        static void Main(string[] args)
        {
            float f=33.77f;
            A ob = (A)f;// ** error!!
            Console.WriteLine(ob.dollar+"   " + ob.cent);
        }
    }
}
```

.....

74.Մեկուսացված մեթոդներ և կլասներ, sealed

[Троелсен-248, 234; Шилдт-367; Нейгел-146]

- Երբեմն անհրաժեշտ է լինում կլասի ժառանգականությունը արգելել ոչ թէ ամբողջ կլասի համար, այլ որոշ անդամների համար: Դա հանարավոր է, եթե անդամները վիրտուալ են և օգտագործում են sealed սահմանափակումը:

```
class A
{
    protected virtual void f()
    {
    }
}
class B : A
{
    protected override sealed void f()
    {
    }
}
class D : B
{
    protected override void f()   //error !!
```

```
    {      }
}
class M
{
    static void Main()
    {
    }
}
```

- **Մեկուսացված կլասներ**

✓ Մեկուսացված կլասները դրանք անժառանգ կլասներ են, որոնց արգելված է դարձնել բազային կլաս և կատարել նրանցից ժառանգում:

✓ Իրականցվում է sealed – ի միջոցով:

```
sealed class B:A
{
        int a;
}
```

……

75.Աբստրակտ կլասներ

[Троелсен-249; Либерти-136; Шилдт-363]

- Կլասը կարող է լինել աբստրակտ: Այս ձևով արգելվում է նրա օբյեկտի ստեղծումը:
- Եթե կա անհրաժեշտություն ժառանգ կլասում պարտադիր իրականացնել բազային կլասի մեթոդները, ապա բազային կլասում մեթոդը հայտարարվում է աբստրակտ: Այդ դեպքում կլասը ավտոմատ դառնում է աբստրակտ:
- Աբստրակտ մեթոդը բազային կլասում չի կարող ունենալ իրականացում:
- Չի թույլատրվում ստեղծել աբստրակտ կլասի օբյեկտ և այն նույնանման է փակ կոնստրուկտորի կիրառմանը:

```
abstract class A
{
   abstract public void f();
}
```

- Ժառանգ կլասում մեթոդի համար օգտագործվում է override սպեցիֆիկատորը:

```
using System;
abstract class A
{
    abstract public void f();
}
sealed class B : A
{
    public override void f()
    {
        Console.WriteLine("ok!");
    }
}
class M
{
    static void Main()
    {
        B ob = new B();
        ob.f();
        //A ob = new A();// error !
    }
}
```

76.Ներդրված կլասներ

[Троелсен-243; Либерти-141]

- Թույլատրվում է կլասի մեջ կլաս հայտարարել: Դա կոչվում է ներդրված կլաս:
- Եթե ներդրված կլասի անդամը փակ է, ապա չի կարող օգտվել ոչ արտաքին կլասը, ոչ այլ կլասներ:
- Ներդրված կլասը կարող է օգտագործել արտաքին կլասի փակ անդամները:
- Եթե ներդրված կլասն է փակ, ապա արտաքին կլասը կարող օգտվել ներդրված կլասից, սակայն չեն կարող օգտվել այլ կլասներ:
- Հարց: Կլասը ինչ մոդոֆիկատոր կարող է ընդունել: Պատասխան: Բոլոր թույլատրության մոդիֆիկատորները, քանի որ, կլասը հնարավոր է լինի ներդրված: Իսկ ինչպես գիտենք, եթե կլասը ներդրված չէ, ապա միայն public և internal: (լռելիությամբ internal):

```
using System;
class A
{
    public void f()
    {
        Console.WriteLine("fA");
        B ob3 = new B();
        ob3.f2();
    }
    public class B
    {
        public void f2()
        {
            Console.WriteLine("fB");
            M ob5 = new M();
            Console.WriteLine(ob5.a);
        }
    }
}

class M
{
    public int a = new int();
    public static void Main()
    {
        A ob = new A();
        ob.f();
        A.B ob2 = new A.B();
        ob2.f2();
        Console.WriteLine(ob);
        Console.WriteLine(ob2);//A + B
    }
}
```

```
output
fA
fB
0
fB
0
A
A+B
```

.....

Օբյեկտ

77.System.Object

[Троелсен-258; Нэш-114; Шилдт-368; Нейгел-135]

- Բոլոր տիպերը առաջացել են `System.Object` կլասից, նույնիսկ չափային տիպերը:
- Նկարագրենք `Object` կլասի անդամները.

```
namespace System
{
    public class Object
    {
        public virtual Boolean Equals(Object obj);
        public virtual Int32 GetHashCode();
        public Type GetType();
        public virtual String ToString();
        protected virtual void Finalize();
        protected Object MemberwiseClone();
        public static bool Equals(object objA, object objB);
        public static bool ReferenceEquals(object objA, object objB);
    }
}
```

- virtual Equals( ) - Վերադարձնում է true, եթե երկու հղումներ նույն օբյեկտն են նշում: Օբյեկտները համեմատելու համար անհրաժեշտ է վերաորոշել:
- virtual GetHashCode( ) – Վերադարձնում է ամբողջ թիվ, որը ցույց է տալիս օբյեկտի իդենտիֆիկացիոն համարը: Այդ համարը վերագրվում է օբյեկտին նրա ստեղծման ժամանակ և ուղեկցվում է մինչև նրա վերանալը: Համարակալումը սկսում է 2 – ից:
- GetType( ) – Վերադարձնում է օբյեկտի տիպը իր անունի տարածքով:
- virtual ToString( ) - Լռելիությամբ վերադարձնում է օբյեկտի անունը իր անունի տարածքով:
- protected virtual Finalize( ) - Ազատում է ռեսուրսները: Կանչվում է դեստրուկտրի կողմից:
- protected MemberwiseClone() - Ստեղծում է օբյկտի մակերեսային կոպիան:
- static Equals( ) - Ստուգում է երկու օբյեկտներ:
- static ReferenceEquals() - Ստուգում է երկու հղումները:

```
using System;
class A
{
    public int a;
    public string name;
    public A(string s1, int a1)
    {
        a = a1;
        name = s1;
    }
}
class M
{
    static void Main()
    {
        A ob1 = new A("ani", 10);
        A ob2 = new A("nune", 10);
        Console.WriteLine("ToString:{0}", ob1.ToString());
        Console.WriteLine("Type:{0}", ob2.GetType());
        Console.WriteLine("hashcode ob1: " + ob1.GetHashCode());
        Console.WriteLine("hashcode ob2: " + ob2.GetHashCode());
    }
}
```

78.Object կլասի ToString() անդամի վերաորոշումը

[Троелсен-261; Нейгел-137]

```
public virtual String ToString();
```

- Կարելի է վերավորոշել ToString( ) - ը, քանի որ այն virtual է: Դա կատարվում է այն դեպքում, երբ օգտագործողը ցանկանում է տեսնել օբյեկտի տեքստային ներկայացումը իր ձևով: Ուղղակի պետք չէ քմահաճորեն այն ներկայացնել: ToString( ) - ը պետք է արտապատկերի ավելի բնորոշիչ ձևով:

```
using System;
class A
{
    private int a;
    public A(int aa)
    {
        a = aa;
    }
    public override string ToString() //
    {
        return a.ToString(); //
    }               //
}
class M
{
    static void Main()
    {
        int b = 5;
        Console.WriteLine(b.ToString());
        A ob = new A(7);
        Console.WriteLine(ob.ToString());
    }
}
```

Output:
5
7

Output: //
5
AAA

.....

79.Object կլասի Equals() անդամի վերաորոշումը

[Троелсен-261; Нэш-444,447; Рихтер-155]

```
public virtual Boolean Equals(Object obj);
```

- Equals() - ը համեմատում է երկու օբյեկտների հղումները: Եթե անհրաժեշտ է համեմատել օբյեկտի պարունակությունը, ապա այն պետք է վերավորոշել, քանի որ virtual է:

```
using System;
class A
{
    private int a;
    public A(int aa)
    {
        a = aa;
    }
    public override bool Equals(object obj)
    {
            A temp;
            temp = (A)obj;
            //if (((A)obj).a == this.a)
            if (temp.a == this.a)
            {
                return true;
            }
```

```
            else
            {
                return false;
            }

        }
}
class M
{
    static void Main()
    {
        A ob = new A(99);
        A ob2 = new A(99);
        if (ob2.Equals(ob))
            Console.WriteLine("Equals");
        else
            Console.WriteLine("not equals");
    }
}
```

- Հարց: ինչու է թարգմանիչը տալիս “warning” Rebuild Solution թարգմանությունով: Որովհետև, եթե վերավորոշվել է Equals() վիրտուալ ֆունկցիան, ապա ցանկալի է վերաորոշել նաև GetHashCode( ) վիրտուլ ֆունկցիան: Հակարակ դեպքում կոմպիլիատորը տալիս է զգուշացում:

……

80.GetHashCode() մեթոդի վերաորոշումը

[Троелсен - 262, 258; Нэш-448]

- Օբյեկտը իր ստեղծման ժամանակ ստանում է նաև Hash կոդ, որպեսզի տարբերվի մյուս օբյեկտներից: Կոդի գեներացման ժամանկ համակարգը օգտվում է օբյեկտի ընթացիք զբաղեցրած հասցեից և ստանում թիվ:
- Գոյություն ունեն տարբեր ալգորիթմներ, որոնք կարող են վերատադրել Hash կոդ: Պարզագույն ձևերից է օրինակ `ToString().GetHashCode()` հրամանը:
- Օրինակը ցուցադրում է, թէ ինչպես միևնույն int a արժեքի դեպքում Hash կոդը նույնն է ստացվում:

```
using System;
class A
{
    public   int a;
    public A(int aa)
    {
        a = aa;
    }
    //public override int GetHashCode()
    //{
    //    return a.ToString().GetHashCode();
    //}
    public override bool Equals(object obj)
    {
        A temp = (A)obj;
        if (temp.a == this.a)
        {
            return true;
        }
        else
        {
            return false;
```

```
        }
    }
}
class M
{
    static void Main()
    {
        A ob = new A(99);
        A ob2 = new A(99);
        Console.WriteLine(ob.GetHashCode());
        Console.WriteLine(ob2.GetHashCode());
        if (ob2.Equals(ob))
            Console.WriteLine("Equals");
        else
            Console.WriteLine("not equals");
    }
}
```

- **GetHashCode()** ի վերաորոշումը միայն **Warning** ի դեմ չէ: Այն ավելի կարևոր և օգտակար կիրառում ունի: Օրինակ, Hashtable կոլեկցիայում (System.Collections անունի տարածք), տվյալներ գրելու համար անհրաժեշտ է երկուսը, և Equals և GetHashCode վերորոշել, որովհետև Hashtable ը ճիշտ օբյեկտ ընտրելու համար կանչում է Equals() և GetHashCode() մեթոդները: Այլ խոսքով, եթե անհրաժեշտ է A կլասի օբյեկտները տեղադրել Hashtable կոլեկցիայում, ապա այդ դեպքում պարտադիր է երկու վերաորոշումները:

……

81.Object կլասի static անդամները

[Троелсен-264; Нейгел-218]

```
public static bool Equals(object objA, object objB);
public static bool ReferenceEquals(object objA, object objB);
```

- Ստատիկ **Equals()** մեթոդը նման է օբյեկտի **Equals()** մեթոդին, ուղղակի այն հնարավոր չէ վերաորոշել:
- Ստատիկ **ReferenceEquals()** մեթոդը համեմատում է միայն հղումները:
- Եթե համեմատվող օբյեկտների տիպը հղիչային է , ապա **Equals()** և **ReferenceEquals()** մեթոդները տալիս են նույն արդյունքը, այսինքն համեմատում են հղումները:
- Եթե համեմատվող օբյեկտների տիպը չափային է (ասենք ստրուկտուրա է), ապա **Equals()** և **ReferenceEquals()** մեթոդները տալիս են տարբեր արդյունքներ, այսինքն **Equals()** համեմատում է օբյեկտները իսկ **ReferenceEquals()** -ը համեմատում է հղումները:

```
using System;
//struct A //struct – value type
class A
{
    public int a;
    public string name;
    public A(string s1, int a1)
    {
        a = a1;
        name = s1;
    }
}
class M
{
    static void Main()
```

```
    {
        A ob1 = new A("Ani", 10);
        A ob2 = new A("Ani", 10);
        //Console.WriteLine("Working with value types"); // struct
        Console.WriteLine("Working with reference types"); //class
        Console.WriteLine(Equals(ob1, ob2)); //false
        Console.WriteLine(ob1.Equals(ob2)); //false
        Console.WriteLine(ReferenceEquals(ob1, ob2)); //false
    }
}
```

.....

82.Object.MemberwiseClone()

[Հայ-115, 427]

- **MemberwiseClone()** մեթոդը հնարավորություն է տալիս կատարել օբյեկտների **մակերեսային** կոպիա: Դա նշանակում է, որ չափային տիպերը կրկնօրինակվում են կատարելով բիթ առ բիթ կոպիա, իսկ օբյեկտի կոմպոզիցաները (հղիչային օբյեկտները) հղում են նույն օբյեկտին, այսինքն չկա օբյեկտի կոպիա:
- Եթե այսպիսի կոպիան չի բավարարում, ապա կա հնարավորություն կատարել ավելի լիարժեք կոպիա, օգտվելով **Icloneable** ինտերֆեյսից կատարելով նրա բոլոր պահանջները, մասնավորապես **Clone()** մեթոդի իրականացումը, որը կանցնենք ավելի ուշ:
- protected -ը ստիպում է սահմանափակվել այն հնարավորությունով, որ միայն կոպիա կատարող կլասը կարող է կատարել **MemberwiseClone()** հրամանը չօգտվելով new – ից և կոնստրուկտորի կանչից: public – ի դեպքում իրավիճակը ավելի կբարդանար այլ կլասների միջամտման պատճառով:

```
//using System;
class A
{
    public void f()
    {
        A ob = new A();
        A ob2 = new A();
        ob2 = (A)ob.MemberwiseClone(); //ok!
    }
}
class Program
{
    static void Main(string[] args)
    {
        A ob = new A();
        A ob2 = new A();
        ob2 = (A)ob.MemberwiseClone(); // error ? // why?
    }
}
//----------------------------
```

- Հաջորդ օրինակը ցույց է տալիս, որ **B** կլասի **N** –ին, եթե վերագրում ենք **1990**, ապա երկու օբյեկտների համար այն նույնն է կամ այլ խոսքով հղում են նույն արժեքին, քանի որ կա մեկ կոպիա, դրա համար էլ կոչվում է մակերեսային կոպիա: **A** կլասի **name** դաշտը օգտագործվում է ուղղակի առանց կոմպոզիցիայի, դրա համար նրանից կա երկու օրինակ, **"Ani"** և **"Nune"** տարբեր արժեքներ տարբեր օբյեկտներին համար:

```
using System;
class B
{
    public int N;
    public B(int n)
    {
        N = n;
    }
}
class A
{
    public string name;
    public B b;
}
class M : A
{
    public static void Main()
    {
        M ob1 = new M();
        ob1.name = "Ani";
        ob1.b = new B(1987);
        M ob2 = (M)ob1.MemberwiseClone();
        Console.WriteLine("ob1  values...");
        Console.WriteLine("{0} : {1}", ob1.name, ob1.b.N);
        Console.WriteLine("ob2  values...");
        Console.WriteLine("{0} : {1}", ob2.name, ob2.b.N);
        Console.WriteLine("------------------");
        ob1.name = "Nune";
        ob1.b.N = 1990;
        Console.WriteLine("ob1  values...");
        Console.WriteLine("{0} : {1}", ob1.name, ob1.b.N);
        Console.WriteLine("ob2  values...");
        Console.WriteLine("{0} : {1}", ob2.name, ob2.b.N);
    }
}
```

.....

83.object - որպես տիպերի ընդանրություն

[Шилдт-372]

- `object` տիպը և `Object` կլասը ընդգրկում են նույն գործողությունները ունենալով լայն հնարավորություններ: `object` ը հնարավորություն է տալիս ստեղծել տիպերի ընդանրություններ: Օրինակ, եթե զանգված է հայտարարված, ապա այն կարող է ընդունել միայն նախորոք նշված տիպը: Իսկ եթե կիրառվի `object` տիպը, ապա նրա սահմանման համաձայն այն կարող է ընդգրկել կամ փոխարինել մնացած բոլոր տիպերին: Օրինակում երևում է, որ զանգվածի էլեմենտները արժեքավորվում են տարբեր տիպերով:

```
using System;
class M
{
    static void Main()
    {
        object[] ob = new object[5];
        ob[0] = 88;
        ob[1] = 44.44;
        ob[2] = 'a';
        ob[3] = "Ani";
```

Output:
88
44,44
a
Ani
False

```
        ob[4] = false;
        for (int i = 0; i < 5; i++)
            Console.WriteLine(ob[i]);
    }
}
//.....................................................
class M  //Троелсен-360
{
    static void Main()
    {
        int a = 25;
        object o = 50;
        long a2 = (long)a;
        //long a2 = (long)o; //exeption   ?
       long a3 = (long)(int)o; // ok!!
    }
}
```

.....

84.Դինամիկ տիպեր – dynamic

[Троелсен-648; Нэш-557; Шилдт-703; Нейгел-359; Уотсон-406]

- object, var, dynamic – ոչ ակնհայտ տիպային հայտարարում:
- object և var տիպիզացումը կատարվում է ծրագրի թարգմանման ժամանակ:
- var – փոփոխականի տիպը որշվում է առաջին վերագրման ժամանակ և փոփոխման ենթակա չէ:
- object – փոփոխականի տիպը կարող է փոխվել:
- dynamic - Համարժեք է object տիպին, սակայն տիպայնացումը կատրվում է կատարման ժամանակ և չկա թարգմանման հսկում:
- Ի տարբերություն var – ի դինամիկ տիպը կարող է լինել կլասի դաշտ, ֆունկցիայի պարամետր, վերադարձվող արժեքի տիպ:
- dynamic կարող են լինել նաև լոկալ փոփոխականները:

```
class A
{
        dynamic a = 999;
        dynamic p { get; set; }
        public dynamic f(dynamic k)
        {
        return k;
        }
}
```

- **Սահմանափակումներ**

Դինամիկ տիպը չի կարող ընդունել լամդա արտահայտություն կամ անանիմ մեթոդ: (Կանցնենք ավելի ուշ)

```
dynamic a = GetDynamicObject();
// Error! Methods on dynamic data can't use lambdas!
a.Method(arg => Console.WriteLine(arg));
```

Չի կարող հասկանալ ընդլայնված մեթոդներ և այդ պատճառով LINQ -ում չի կիրառվում: (Կանցնենք ավելի ուշ)

```
dynamic a = GetDynamicObject();
// Error! Dynamic data can't find the Select() extension method!
```

```
var data = from d in a select d;
```

- Դինամիկ տիպի օգտագործումը ստիպում է կատարել ընտրություն տիպի անապահովության և օպտիմալ կոդի միջև: Այն **կիրառելի** է ռեֆլեքսիայում ուշացած կապվածության համար: Կամ ասենք COM գրադարաններից օգտվելու համար (office փաթեթի տվյալներ):
- dotNET – ում օգտագործվում է Dynamic Language Runtime (DLR). DLR -ը նորույթ չէ և օրինակ Smalltalk, LISP, Ruby, Python լեզուները աշխատում են դինամկ միջավայրում:
- Կոդը ստանում է մեծ ճկունություն: Կարելի է հանգիստ կատարել կոդում փոփոխություն չդիմելով տիպերի բարդ վերափոխման մեխանիզմին:
- Փոխհարաբերության պարզեցում տարբեր պլատֆորմների և լեզուների միջև:
- Կատարման ժամանակ հիշողությունում տիպերի անդամների ավելացում կամ փոփոխում:
- Համագործակցում **IronPython** և **IronRuby** լեզուների հետ, որոնք աշխատում են դինամիկ միջավայրում և ունեն NET գրադարաններից օգտվելու հնարավորություն:

```
using System;
class M  //Троелсен-360
{
    static void Main()
    {
        // var v = 3;
        // v = 'a'; //error!!!
        dynamic a = 555; // Run Time error!!
        // object a = 555; // Compiler  error!!
        bool b = true;
        b = a;
        Console.ReadKey();
    }
}
```

.....

Ինտերֆեյս

85.Ինտերֆեյս

[Шилдт-375; Троелсен-320; Либерти-162]

- Ինտերֆեյսը տրամաբանական կառույց է: Նրան օգտագործելու համար պետք է ժառանգել:
- Ինտերֆեյսը որոշում է անդամներ, որոնք պետք է պարտադիր իրականացնեն կլասները կամ ստրուկտուրաները: Ինքը ինտերֆեյսը չի իրականացնում այդ անդամները:
- Ինչպես գիտենք աբստրակտ կլասները ունենալով աբստրակտ մեթոդներ ստիպում են ժառանգման ժամանակ օգտագործող կլասներին անպայման իրականացնել այդ մեթոդները: (աբստրակտ կլասներից չի կարելի օբյեկտ ստանալ): Այս ձևով աբստրակտ կլասը դառնում է ինտերֆեյս մյուս կլասների համար: C# -ում այս միտքը զարգացվել է առանձին ձևով – ինտերֆեյսներով:
- Աբստրակտ կլասները կարող են ունենալ ոչ աբստրակտ անդամներ և նրանց կարելի է իրականացնել ժառանգ կլասների միջոցով:
- Ինտեֆեյսում ոչ մի մեթոդ չի կարող ունենալ որոշում (մարմին) (աբստրակտում – ոչ աբստրակտ մեթոդները կարող են): Այսինքն ինտերֆեյսում նշվում է ինչ ձևով պետք է իրականացվի մեթոդը, բայց կոնկրետ չի նշվում ինչպես: Եթե կլասը օգտագործում է ինտերֆեյս, ապա նա պարտավոր է ինտերֆեյսի բոլոր անդամները որոշել - այսինքն կիրառել:

Գրման ձևը՝

```
public interface  I2
{     bool f();
      int p {get;set;}
      string this [int xxx]{get; set;}
      event ddd eed;
}
```

Օգտագործումը՝

```
class A : I2
{  //.....   }
```

- Ինտերֆեյսը կարող է հայարարել մեթոդ, հատկանիշ, ինդեքսատոր, իրադարձություն:
- Ինտերֆեյսը չի կարող ունենալ տվյալների դաշտ: Չեն կարող որոշել կոնստրուկտոր, դեստրուկտոր: Նրա ոչ մի անդամ չի կարող լինել static: Իմաստ չունի գրել անդամներին թույլատրելիության մոդիֆիկատոր public, որովհետև նա միշտ բաց է:
- Ժառանգման ժամանակ նույնպես անհրաժեշտ է թույլատրել public –ով:

```
interface I2
{
    bool f();
}
class A : I2
{
    public bool f()
    {
        return true;
    }
}
class M
{
    static void Main()
    {
        A ob = new A();
        System.Console.WriteLine(ob.f());
    }
}
```

86.Ինտերֆեյսի հղում

[Шилдт-381; Либерти-171]

```
interface  I2
{
   void f();
}
class A: I2
{
   public void f()
        {
             Console.WriteLine("barev !!");
        }
}
```

- Կարելի է ինտերֆեյսի անդամին դիմել հետևյալ ձևով
  A ob = new A(); ob.f();
  Այնպես էլ այս ձևին ալտերնատիվ - կարելի է ստեղծել ինտերֆեյսի հղում, որը ստանում է կլասի օբյեկտ տիպերի վերափոխման օպերացիայով (գիտենք, ինտերֆեյսի օբյեկտ չի կարելի ստեղծել):
  A ob = new A();
  I2 iob = (I2)ob; iob.f();
  կամ մեկ տողով - I2 iob = (I2) new A();
  Այս ձևը դառնում է կլասի անդամներին դիմելու ինտերֆեյսի ցուցիչով ձև:
  iob.f(); և ոչ թե ob.f();
- Այսպիսով կարելի է հայտարարել հղիչային փոփոխական ինտերֆեյսային տիպի: Այդպիսի փոփոխականը կարող է հղել ցանկացած օբյեկտ, որը իրականացնում է ինտերֆեյսը: Երբ ինտերֆեյսը հղիչի միջոցով է կանչում մեթոդը, կատարվում է մեթոդի այն տարբերակը, որը իրականացնում է այդ օբյեկտը: Դա նման է բազային հղիչով ածանցյալ կլասի օբյեկտներին դիմելուն, կամ այլ խոսքով պոլիմորֆ օգտագործում:

```
public interface I2
{
    int f();
}
class A : I2
{
    int a;
    public A()
    {
        a = 0;
    }
    public int f()
    {
        a += 2;
        return a;
    }
}
class B : I2
{
    int b;
    public B()
    {
        b = 5;
    }
    public int f()
```

```
    {
        b += 19;
        return b;
    }
}
class M
{
    public static void Main()
    {
        A ob1 = new A();
        B ob2 = new B();
        I2 iob;
        iob = ob1;
        System.Console.WriteLine("a = " + iob.f());
        iob = ob2;
        System.Console.WriteLine("b = " + iob.f());
    }
}
```

.....

87.Ինտերֆեյսի is և as պատկանելիության ձևեր

[Троелсен-329; Либерти-173]

- Շատ դեպքերում պարզ չի լինում թե արդյոք կլասը անհրաժեշտ ինտերֆեյս ապահովում է, թե ոչ: Պատկանելիությունը ստուգելու համար կա երեք ձև.

✓ առաջինը - արտակարգ իրավիճակի մշակումով try...catch , որը տալիս է InvalidCastException իրավիճակ և որը պետք է մշակել(ավելի ուշ):

✓ երկրորդը – as, այս դեպքում եթե հղումը ինտերֆեյս չի հայտնաբերում, ապա ստանում ենք null հղում:

✓ երրորդը – is - այս դեպքում համեմատվում է օբյեկտի հետ և անհամապատասխանության դեպքում վերադարձնում է false :

```
using System;//interface try..catch
interface I2
{
    byte PP { get; }
}
class A : I2
{
    public byte PP
    {
        get { return 4; }
    }
}
class M
{
    static void Main()
    {
        A ob = new A();
        I2 iob;
        try
        {
            iob = (I2)ob;
            Console.WriteLine(iob.PP);
        }
        catch (InvalidCastException e)
        {
            Console.WriteLine(e.Message);
```

```
        }
    }
}
//...............................

interface I2 //interface as
{
    byte PP
    {
        get;
    }
}
class A : I2
{
    public byte PP
    {
        get
        {
            return 44;
        }
    }
}
class M
{
    static void Main()
    {
        A ob = new A();
        I2 iob = ob as I2;
        if (iob != null)
            System.Console.WriteLine(iob.PP);
        else
            System.Console.WriteLine("don't");
    }
}
//...............................

interface I2 //interface is
{
    byte PP
    {
        get;
    }
}
class A : I2
{
    public byte PP
    {
        get
        {
            return 44;
        }
    }
}
class M
{
    static void Main()
    {
        A ob = new A();
        if (ob is I2)
```

```
            System.Console.WriteLine(ob.PP);
        else
            System.Console.WriteLine("don't");
    }
}
```

.....

88.Ինտերֆեյսը որպես պարամետր և վերադարձվող արժեք

[Троелсен-330]

- Ինտերֆեյսը կարող է օգտագործվել ինչպես մեթոդի պարամետր, այնպես էլ մեթոդի վերադարձվող արժեք:

```
interface I2
{
    void ff();
}
class A : I2
{
    public void ff()
    {
        System.Console.WriteLine("interface - parameter");
    }
}
class M
{
    static void ffM(I2 iob)
    {

        iob.ff();
    }
    static void Main()
    {
        A ob = new A();
        I2 iob2 = ob;
        ffM(iob2);  //  ffc((I2)ob);
    }
}

// Ինտերֆեյսը որպես վերադարձվող արժեք  [Троелсен-332]
interface I2
{
    void ff();
}
class A : I2
{
    public void ff()
    {
        System.Console.WriteLine("interface - return");
    }
}
class M
{
    static I2 ffc(object ob)
    {
        if (ob is I2)
```

```
            return (I2)ob;
        else
            return null;
    }
    static void Main()
    {
        A ob = new A();
        I2 iob = ffc(ob);
        if (iob != null)
            System.Console.WriteLine("return I2");
        else
            System.Console.WriteLine("have not I2");
    }
}
```

.....

89. Ինտերֆեյսների ժառանգականություն, բազմաժառանգում

[Троелсен-337]

- Ինչպես կլասում ստեղծվում է ժառանգականություն, այնպես էլ ինտեֆեյսը կարող են կազմվել ենթակայության սկզբունքով, կազմելով հիերարխիկ ծառ:

```
interface I1
{
    void ff();
}
interface I2 : I1
{
    void ff2();
}
class A : I2
{
    public void ff()
    {
        System.Console.WriteLine("interface 1");
    }
    public void ff2()
    {
        System.Console.WriteLine("interface 2");
    }
}
class M
{
    public static void Main()
    {
        A ob = new A();
        I2 iob2 = (I2)ob;
        iob2.ff();
        iob2.ff2();
    }
}
```

.....

90.Ինտերֆեյսների բացահայտ իրականացում

[Троелсен-338]

- Քանի որ C# - ում կլասին չի թույլատրվում ժառանգել մեկից ավելի կլասներ, օգտագործվում է մեկից ավելի ինտերֆեյսների ժառանգության կիրառությունը:
```
class C : A, I1,I2
{
}
```
- Ինտերֆեյսում նույնպես թույլատրելի է բազմաժառանգականությունը:
```
interface I1 : I2,I3
{
    void ff();
}
```
- Հնարավոր է դեպք, երբ տարբեր ինտերֆեյսների մեթոդներ ունեն նույն անունը և տիպը և բազմաժառանգման դեպքում լինել կոնֆլիկտներ: Կարելի է անդամին դիմել գրելով նաև ինտերֆեյսի անունը: Այս ձևը հնարավորություն է տալիս խուսափել կոնֆլիկտներից: Համնկնող անդամները պետք է լինեն բացահայտ իրականացումով:
```
class A : I2,I1
{
   void I1.ff ()
   {      }
          void I2.ff ()
   {      }
}
```
- Բացահայտ իրականացման դեպքում անդամը միշտ ոչ ակնհայտ փակ է և չի կարող ընդունել մոդիֆիկտորներ abstract, virtual, override, new:
- Բացահայտ իրականացումը օբյեկտով չի կարող աշխատել: Օգտագործման միակ ձևը, դա ինտերֆեյսի ցուցիչով է:
- Եթե անհրաժեշտ է օբյեկտով կանչ, ապա պետք է գրված լինի ոչ բացահայտ իրականացում, որը պարզ է այս դեպքում չի կարող աշխատել ինտերֆեյսի ցուցիչով:

```
interface I1
{
    void ff();
}
interface I2
{
    void ff();
}
class A : I1, I2
{
    void I1.ff()
    {
       System.Console.WriteLine("A.I1.ff called");
    }
    void I2.ff()
    {
      System.Console.WriteLine("A.I2.ff called");
    }
    public void ff()
    {
        System.Console.WriteLine("A ff() called");
    }
}
class M
{
```

```
    static void Main()
    {
        A ob = new A();
        ob.ff();
        I1 iob1 = (I1)ob;
        iob1.ff();
        //((I1)ob).ff(); one line
        ((I2)ob).ff();
    }
}
//-----------------------------------
```

- Կլասի փակ անդամը կարելի է նաև օգտագործել ինտերֆեյսի բացահայտ իրականացումով:

```
interface I
{
    void ff();
}

class A:I
{
    void I.ff()
    {
         System.Console.WriteLine("Welcome");
    }
}
class M
{
    static void Main()
    {
        I i = new A();
        i.ff();
    }
}
```

.....

91.Ինտերֆեյս ICloneable

[Троелсен-346; Шилдт-779]

- Ինչպես նշել ենք Object կլասը ունի մակերեսային կոպիայի (կլոնավորման) հնարավորություն `MemberwiseClone()` մեթոդով: Եթե անհրաժեշտ է խորը կլոնավորում, այսինքն կոմպոզիցան նույնպես կլոնավորել, այլ ոչ թէ հղել, ապա օգտագործվում է ICloneable ինտերֆեյսը: Ժառանգելով այն պարտավորվում ենք իրականացնել `public object Clone()` մեթոդը:
- Առաջին օրինակում մակերեսային է կլոնավորումը, որովհետև կոմպոզիցիայի հղում չկա: Եվ `MemberwiseClone()` մեթոդով և առանց նրա նույն արդյունքն է ստացվում:
- Երկրորդ օրինակում կատարվում է խորը կլոնավորում, `Clone()` մեթոդում գրելով կոմպոզիցիայի անդամների վերագրումը: Այս հնարավորությունը նման է կոպիայի կոնստրուկտորին:

```
// shallow copy // մակերեսային կլոնավորում
using System;
class A : ICloneable
{
    public int x;
    public A(int x)
    {
        this.x = x;
    }
    public override string ToString()
```

```
    {
        return string.Format("X = {0}", x);
    }
    public object Clone()
    {
       // return new A(this.x);
        return this.MemberwiseClone();
    }
}
class M
{
    static void Main()
    {
        A ob1 = new A(50);
        A ob2 = ob1; // Վերագրում
        Console.WriteLine(ob1);
        Console.WriteLine(ob2);
        Console.WriteLine();
        ob2.x = 0;
        Console.WriteLine(ob1);
        Console.WriteLine(ob2);
        A ob3 = new A(100);
        A ob4 = (A)ob3.Clone(); // Կլոնավորում
        Console.WriteLine();
        Console.WriteLine("clone......");
        ob4.x = 999;
        Console.WriteLine(ob3);
        Console.WriteLine(ob4);
    }
}
//.....................................................................................
// Deep Copy // խորը կլոնավորում
using System;
class B
{
    public int x;
}
class A : ICloneable
{
    public string name;
    public B obB = new B();
    public A(int x, string s)
    {
        this.name = s;
        obB.x = x;
    }
    public override string ToString()
    {
        return string.Format("{0}; {1}", name, obB.x);
    }
    public object Clone()
    {
        A temp = (A)this.MemberwiseClone();
        B ob = new B();
        ob.x = this.obB.x;
        temp.obB = ob;
        return temp;
        //return this.MemberwiseClone(); // shallow copy
    }
```

```
}
class M
{
    static void Main()
    {
        A ob1 = new A(100, "ani");
        A ob2 = (A)ob1.Clone();
        Console.WriteLine(ob1);
        Console.WriteLine("clone.....");
        Console.WriteLine(ob2);
        Console.WriteLine();
        Console.WriteLine("chenged....");
        ob2.name = "nune";
        ob2.obB.x = 999;
        Console.WriteLine(ob1);
        Console.WriteLine("clone.....");
        Console.WriteLine(ob2);
    }
}
```

.....

92.Ինտերֆեյս IEnumerable

[Троелсен-340; Шилдт - 1001]

- foreach հրամանը կարողանում է ցանկացած զանգվածի անդամներ կարդալ ըստ հերթականության, որովհետև Array կլասը իրականացնում է IEnumerable ինտերֆեյսը:
- Ցանկացած տիպ կարող է ունենալ նույն պահվածքը, եթե այն իրականացնում է GetEnumerator() մեթոդը: Այն ֆորմալ ձևով հայտարարված է IEnumerable ինտերֆեյսում, որը գտնվում է System.Collections անունի տարածքում և վերադարձնում է IEnumerator ինտերֆեյս:

```
    public interface IEnumerable
    {
        IEnumerator GetEnumerator();
    }
    public interface IEnumerator
    {
        bool MoveNext(); // Կուրսորի տեղաշարժ
        object Current { get; } // Ընթացիք էլեմենտի ստացում
        void Reset(); // Տեղաշաժվող կուրսորի տեղաշարժի “reset”
    }
//.........................................
using System;
using System.Collections;
class Car
{
    public string name;
    public Car(string n)
    {
        name = n;
    }
}
class Garage
{
    Car[] c = new Car[4];
    public Garage()
    {
        c[0] = new Car("toyota");
        c[1] = new Car("mercedes");
        c[2] = new Car("nissan");
```

```
        c[3] = new Car("lexus");
    }
}
class Program
{

    static void Main(string[] args)
    {
        Garage g = new Garage();
        foreach(Car c in g) //error!!
        {
            Console.WriteLine(c.name);
        }

    }
}
//.........................................
using System;
using System.Collections;
class Car
{
    public string name;
    public Car(string n)
    {
        name = n;
    }
}
class Garage:IEnumerable
{
    Car[] c = new Car[4];
    public Garage()
    {
        c[0] = new Car("toyota");
        c[1] = new Car("mercedes");
        c[2] = new Car("nissan");
        c[3] = new Car("lexus");
    }
    public IEnumerator GetEnumerator()
    {
        return c.GetEnumerator();
    }
    // Եթե անհրաժեշտ է թաքցնել Ienumerable ինտերֆեյի հնարավորությունները օբյեկտի
    // մակարդակով, կարելի է օգտվել ինտերֆեյսի բացահայտ իրականացումից
    //IEnumerator IEnumerable.GetEnumerator()
    //{
    //    return c.GetEnumerator();
    //}
}
class Program
{
    static void Main(string[] args)
    {
        Garage g = new Garage();
        foreach(Car c in g)
        {
            Console.WriteLine(c.name);
        }
    }
}
```

93. foreach և IEnumerable

[Нейгел-197; Уотсон-295]

- foreach - ի մասին: Թարգմանության ժամանակ այն չի վերածվում միջանկյալ լեզվի օպերատորի: Այն վերածվում է IEnumerable ինտերֆեյսի մեթոդների և հատկանիշների:

```
foreach (var p in persons)
{
    Console.WriteLine(p);
}
```

Վերածվում է

```
IEnumerator<Person> enumerator = persons.GetEnumerator();
while (enumerator.MoveNext())
{
    Person p = (Person)enumerator.Current;
    Console.WriteLine(p);
}
```

- Սկզբից կանչվում է GetEnumerator() մեթոդը զանգվածի հաշվիչ ստանալու համար: while ցիկլը կատարվաում է այնքան ժամանակ, քանի դեռ MoveNext() մեթոդը վերադարձնում է true: Զանգվածի էլեմենտները հասանելի են դառնում Current հատկանիշի միջոցով:

……

94.Իտերատորներ, Օպերատոր yield

[Шилдт-1003; Троелсен-343; Нейгел-197; Уотсон-295]

- Իտերատորը, դա կոդերի բլոկ է, որը հնարավորություն է տալիս ամբողջ տվյալները կարդալ ըստ հերթականության:
- Երբեմն անհրաժեշտ է լինում foreach - ի միջոցով աշխատացնել սեփական կլասները որպես կոլեկցիաներ (համարակալվող համակարգեր) չօգտվելով IEnumerable ինտերֆեյսի ժառանգումից: Դրա համա կարելի է օգտվել իտերատորներից, որը կազմակերպվում է yield return հրամանի միջոցով:
- Իտերատորը հնարավորություն է տալիս ընդհատել իտերատրի ցիկլը yield break հրամանով:

```
using System;
using System.Collections;
class Car
{
    public string name;
    public Car(string n)
    {
        name = n;
    }
}
class Garage
{
    Car[] c = new Car[4];
    public Garage()
    {
        c[0] = new Car("toyota");
        c[1] = new Car("mercedes");
        c[2] = new Car("nissan");
        c[3] = new Car("lexus");
    }
    public IEnumerator GetEnumerator()
    {
        yield return c[0];//
        yield return c[1];//
```

```
        yield return c[2];//
        yield return c[3];//
        //foreach (Car x in c) //կամ
        //    yield return x;
    }
}
class Program
{
    static void Main(string[] args)
    {
        Garage g = new Garage();
        foreach (Car c in g)
        {
            Console.WriteLine(c.name);
        }
    }
}
//-----------------
```

- Իտերատորում պարտադիր չէ կուտակիչի առկայություն և կարելի է ընդհատել ցիկլը `yield break` հրամանով;

```
using System;//Шилдт-1004;
using System.Collections;
class A
{
    char ch = 'A';
    public IEnumerator GetEnumerator()
    {
        for (int i = 0; i < 26; i++)
        {
            if (i == 10)
            yield break;
            yield return (char)(ch + i);
        }
    }
}
class M
{
    static void Main()
    {
        A ob = new A();
        foreach (char ch in ob)
            Console.Write(ch + " ");
        Console.WriteLine();
    }
}
```

.....

95.Անվանական իտերատորներ

[Троелсен-344; Нейгел-199]

- Իտերատորը օգտագործվում է ցանկացած մեթոդում: Այդ դեպքում մեթոդը կոչվում է **անվանական իտերատոր** և թույլատրվում է օգտագործել for() ցիկլ:

```
using System;
using System.Collections;
class A
{
    string[] names = { "aaa", "bbb", "ddd", "ccc" };
    public IEnumerator GetEnumerator()
    {
```

```
        for (int i = 0; i < 4; i++)
        {
            yield return names[i];
        }
    }
    public IEnumerable Reverse()
    {
        for (int i = 3; i >= 0; i--)
        {
            yield return names[i];
        }
    }
}
class Program
{
    static void Main(string[] args)
    {
        var titles = new A();
        foreach (var t in titles)
        {
            Console.WriteLine(t);
        }
        Console.WriteLine();
        Console.WriteLine("revers........");
        foreach (var t in titles.Reverse())
        {
            Console.WriteLine(t);
        }
    }
}
//----------------------------
```

- Անվանական իտերատրի առավելություններից է պարամետրի փոխանցումն հնարավորությունը:

```
using System; //Шилдт-1007;
using System.Collections;
class A
{
    char ch = 'A';
    public IEnumerable ff(int end)
    {
        for (int i = 0; i < end; i++)
            yield return (char)(ch + i);
    }
    public IEnumerable ff(int begin, int end)
    {
        for (int i = begin; i < end; i++)
            yield return (char)(ch + i);
    }
}
class M
{    static void Main()
    {
        A ob = new A();
        foreach (char ch in ob.ff(7))
            Console.Write(ch + " ");
        Console.WriteLine();
        foreach (char ch in ob.ff(5, 12))
            Console.Write(ch + " ");
    }
}
```

96.Ինտերֆեյս ICamparable

[Троелсен-350; Шилдт-778]

- Հնարավորություն է տալիս համեմատել երկու օբյեկտներ:

```
interface IComparable
{
    int CompareTo(object o);
}
```

- Ներկայացված կառուցվածքի մեջ `int CompareTo(object o)` մեթոդ կանչող օբյեկտը համեմատվում է այն օբյեկտի հետ, որը որոշվում է պարամետրով: Եթե կանչող օբյեկտի պարունակությունը մեծ է պարամետում նշվածից, ապա վերադարձվում է “1” արժեք: Եթե կանչող օբյեկտի պարունակությունը փոքր է պարամետում նշվածից, ապա վերադարձվում է “-1” արժեք: Եթե երկու օբյեկտների պարունակությունը նույնն է, ապա վերադարձվում է “0” արժեք:
- `IComparable` ինտերֆեյսի օգտագործման տեղերից մեկը `System.Array` կլասն է: `Array` կլասը ունի Sort() մեթոդը, որը կարող է վերադասավորել ներդրված տիպերով անդամները(int, string և այլն): Այդ անդամները կարելի է վերադասավորել թվային կամ սիմվոլային հաջորդականությամբ, քանի որ նշված տիպրի համար իրականացված է `IComparable` ինտերֆեյսը:
- Վերցնենք հետևյալ կլասը.

```
class Car
{
    public string CarName;
    public int CarID { get; set; }
}
```

- Ինչ կարող է լինել, եթե օրինակ օգտագործենք ասենք `Car` տիպի զանգված և կիրառենք `Array.Sort(obCar)` հրամանը:
- Կառաջանա արտակարգ իրավիճակ, քանի որ `Car` տիպի համար `IComparable` ինտերֆեյս իրականացված չէ: Որպեսզի հնարավոր լինի կիրառել `Array.Sort(obCar)` հրամանը, ապա անհրաժեշտ է իրականացնել `IComparable` ինտերֆեյսի `int CompareTo(object o)` մեթոդը: Անհրաժեշտ է ընտրել նաև `Car` կլասի ըստ որ անդամի է կատարվում վերադասավորման կարգավորումը: Օրինակ կարելի է վերցնել ըստ `CarID` դաշտի:

```
using System;
class Car : IComparable
{
    public string CarName;
    public int CarID { get; set; }
    public Car(string name,int id)
    {
        CarName = name;
        CarID = id;
    }
    public int CompareTo(object o)
    {
        Car temp = o as Car;
        if (temp != null)
        {
            if (this.CarID > temp.CarID)
                return 1;
            if (this.CarID < temp.CarID)
                return -1;
            else
                return 0;
        }
        else
```

```
            throw new ArgumentException("Parameter is not a Car!");
        // ............. 2nd way
        //Car temp = o as Car;
        //if (temp != null)
        //{     return CarID.CompareTo(temp.CarID); }
        //else    throw new ArgumentException("Parameter is not a Car!");
    }
}

class Program
{
    static void Main(string[] args)
    {
        Car[] ob=new Car[5];
        ob[0] = new Car("Toyota",55);
        ob[1] = new Car("Mersedes", 33);
        ob[2] = new Car("Lexuz", 9);
        ob[3] = new Car("BMW",  44);
        ob[4] = new Car("Nissan", 5);
        foreach(Car c in ob)
            Console.WriteLine(c.CarID+ "\t"+ c.CarName);
        Array.Sort(ob);
        Console.WriteLine();
        foreach (Car c in ob)
            Console.WriteLine(c.CarID + "\t" + c.CarName);
    }
}
```

.....

Դելեգատներ, Իրադարձություն

97.Դելեգատներ

[Шилдт-473; Троелсен-386; Нейгел-241]

- Դելեգատը օբյեկտ է, որը կարող է հղել մեթոդին: Ստեղծելով դելեգատի օբյեկտ կարելի է նրա միջոցով կանչել մեթոդ: Նա նման է C++ -ի ցուցիչի, որը դիմում է ֆունկցիային: Սակայն դելեգատը համարվում է ղեկավարվող օբյեկտ, և դա նշանակում է կատարման ժամանակ օգտվել որոշ առավելություններից (չթույլատվող հասցեներից խուսափում, հիշողության խախտման խուսափում…):
- Ինչպես գիտենք կարելի է հղել միայն օբյեկտին: Ֆունկցիան օբյեկտ չէ, սակայն նա նույնպես գտնվում է ֆիզիկական հասցեում և այդ հասցեով է կանչվում ֆունկցիան: Ահա այդ հասցեն վերագրվում է դելեգատին:
- Որտեղ են օգտագործվում դելեգատները:
- ✓ առաջինը - դելեգատները ապահովում են իրադարձությունների աշխատանքը:
- ✓ երկրորդ - նրանք թույլ են տալիս ծրագրի օգտագործման ժամանակ կատարել մեթոդ, որը հայտնի չէ թարգմանման ժամանակ:
- ✓ երրորդ - (callback) - հետադարձ կանչի ֆունկցիա, որի աշխատանքը հիմնված է ֆունկցիայի ցուցիչի վրա: Երբ ֆունկցիան վերջացնում է իր աշխատանքը, նա տեղեկացնում է դրա մասին: Նախկինում նրանք օգտագործվում էին Windows API ֆունկցիաներից օգտվելու համար:
- Օրինակ `public delegate int ddd(int x, int y);` Այս հայտարարումը թարգմանիչը վերածում է հետևյալ կլասի:

```
sealed class ddd: System.MulticastDelegate
{
      public ddd(uint functionAddress);
      public int Invoke(int x, int y);
      public IAsyncResult BeginInvoke(int x, int y,AsyncCallback cb, object state);
      public int EndInvoke(IAsyncResult result);
}
```

- Invoke() մեթոդը աշխատում է սինխրոն և դա նշանակում է քանի դեռ չի ավարտվել կանչված մեթոդը ծրագրի տվյալ հատվածը չի կարող շարունակվել և զարմանալի է, սակայն անմիջական հնարավոր չէ կանչել Invoke() մեթոդը:
- BeginInvoke() and EndInvoke() մեթոդները ապահովում է ասինխրոն աշխատանք, որը նշանակում է ծրագիրը կարող է շարունակվել երկրորդական հոսքում զուգահեռ ձևով: Նույն արդյունքին կարելի է հասնել հոսքերի միջոցով, սակայն նշված ձևը օգտագործման տեսակետից ավելի պարզ է:

Դելեգատների օգտագործումը [Шилдт-474; Либерти-301; Нейгел-243]

- Դելեգատի հայտարարման ժամանակ որոշվում է ֆունկցիայի վերադարձնող արժեքը, պարամետրերի տեսակները և քանակը:
  `delegate int  ddd(int a1, int a2);`
- Այնուհետև պետք է հայտարարել դելեգատի օբյեկտ: Որից հետո ստեղծում ենք մեթոդ, որը մշակում է դելեգատը: Նա պետք է ունենա նույն սիգնատուրան (վերադարձվող արժեք, պարամետրերի տեսակ և քանակի նույնություն), որը ունի դելեգատը:

```
class A
{
    ddd ddobject; // հայտարարել դելեգատի օբյեկտ
    public int ff(int a1, int a2) // մշակում է դելեգատը
    {
        return a1 + a2;
    }
}
```

- Պետք է միացնել մշակողը դելեգատին: Ասենք Main() ծրագրում:

```
   A ob = new A();
   ob. ddobject =  new ddd (ob.ff);
```

- մեթոդի կանչելը դելեգատի միջոցով:

```
   int result = ddobject (5,9);  // result = 14
using System;
delegate string ddd(string ss);
class M
{
    static string replaceSpaces(string a)
    {
        Console.WriteLine("Replacement");
        return a.Replace(' ', '-');
    }
    static string removeSpaces(string a)
    {
        string temp = "";
        Console.WriteLine("removal");
        for (int i = 0; i < a.Length; i++)
            if (a[i] != ' ')
                temp += a[i];
        return temp;
    }
    static string reverse(string a)
    {
        string temp = "";
        Console.WriteLine("revers");
        for (int i = a.Length - 1; i >= 0; i--)
            temp += a[i];
        return temp;
    }
    public static void Main()
    {
        ddd ddob = new ddd(replaceSpaces);
        Console.WriteLine(ddob("It is the simple test"));
        ddob = new ddd(removeSpaces);
        Console.WriteLine(ddob("It is the simple test "));
        ddob = new ddd(reverse);
        Console.WriteLine(ddob("It is the simple test "));
    }
}
```

```
Output
replacement
it-is-the-simple-test
removal
itisthesimpletest
revers
tset elpmis eht si ti
```

.....

98.Խմբային դելեգատներ

[Шилдт-476; Троелсен-396; Нейгел-251; Либерти-316]

- Խմբային դելեգատներ - դա միայնակ դելեգատ է , որը փոխարինում է երկու և ավելի դելեգատների: Նա ձևավորվում է + = նշանով մեկ դելեգատը միացնելով մյուսին: (- =) – ով կարելի է հանել խմբից: Կանչելով դելեգատը կատարվում է դելեգատների խումբը:
- Նրանք պետք է ունենան հիմնականում void վերադարձվող արժեք: (Либерти,317) – կարելի է առանց void – ի, այդ դեպքում վերադարձնում է վերջին դելեգատի վերադարձած արժեքը:
- Կանչելու հերթականությունը պաշտպանվում են նույն ձևով, ինչ ձևով ձևավորվել է դելեգատների խումբը:

```
using System;
public delegate void ddd(int a1, int a2);
class M
{
    ddd ddd1; ddd ddd2; ddd ddd3;
```

```
    public void ffAdd(int a1, int a2)
    {
        Console.WriteLine("add " + (a1 + a2));
    }
    public void ffSub(int a1, int a2)
    {
        Console.WriteLine("sub " + (a1 - a2));
    }
    public void ffMul(int a1, int a2)
    {
        Console.WriteLine("mul " + (a1 * a2));
    }
    public static void Main()
    {
        M ob = new M();
        ob.ddd1 = new ddd(ob.ffAdd);
        ob.ddd2 = new ddd(ob.ffSub);
        ob.ddd3 = new ddd(ob.ffMul);
        ddd Multiddd = ob.ddd1;
        Multiddd += ob.ddd2;
        Multiddd += ob.ddd3;
        Multiddd(7, 5);
        Multiddd -= ob.ddd3;
        Multiddd(4, 4);
    }
}
```

……

99.Delegate և MulticastDelegate բազային կլասներ

[Троелсен-389; Нэш - 288]

- System.MulticastDelegate կլասի որոշ անդամները

```
public abstract class MulticastDelegate : Delegate
{
      // Returns the list of methods "pointed to."
      public sealed override Delegate[] GetInvocationList();
      // Overloaded operators.
      public static bool operator ==(MulticastDelegate d1, MulticastDelegate d2);
      public static bool operator !=(MulticastDelegate d1, MulticastDelegate d2);
}
```

- System.Delegate կլասի որոշ անդամները

```
public abstract class Delegate : ICloneable, ISerializable
{
    // Methods to interact with the list of functions.
    public static Delegate Combine(params Delegate[] delegates);
    public static Delegate Combine(Delegate a, Delegate b);
    public static Delegate Remove(Delegate source, Delegate value);
    // Properties that expose the delegate target.
